պիտի ահսնիս: Հինց գիդիս վրայ ու վրայ տնդզիլը
լաւ բան է. մէկ էլ տեսար աճկդ խափս էրիտ ու
բանը մօշլա էլաւ. էս խօ ախչկայ բօղալլ դուս
կտրվեցաւ, զնաց. դրուստ մահացու միխկ կու'լի,
քու արխը. ով գիդէ իժում խղճի զլսին ինչ զայ...
Զէ, չէ, վուրթի, զուն իմը լսէ, յօրէս հսային զու-
քայ, էրեսդ խէչը հանէ ու դնա զէմ ու զէմը նշտ-
նը տան:

ԳԵՂՐԳ, զայրացած:

Որ սպանես էլ, գէդի, չեմ կարող. մինչև գոնէ
մէկ անգամ էլ հետը շխօսիմ և նորա խօսակցութիւ-
նը չլսեմ, բոլսրովին չի լինի այդ բանը, թէի մէկ
միլիօն էլ տան:

ՔԵԹԵՒԱՆ

Թէ ասում իս վուր հիգը խօսիլ էլ իս, ուրիշ ինչ
պիտի խօսիս: Գիգենաս վուր էտ մէ մինձ բախտ
է, վուր էտէնց ուստ է էկի. հաղթէնը մէկին չի
պատահի էտէնց:

ԳԵՂՐԳ

Էհ, այն ինչ խօսիլու հաշվումն էր:— Խօսել ես:
ՔԵԹԵՒԱՆ

Իհ, լաւ է, զէնացվալօս զէդէն, սիրտս մի շուռ
տա. արա էտ խօսկ է վուր զուն իս ասում: Նշնելու
ախչիկը վուր զիգենայ թէ իրան պիտի ուզիս, էլ
իր ձէնը կու խմաց անէ քիշ:

ԳԵՈՐԳ

Եթէ նա էլ այն աղջիկներիցն է, որ ինձ հետ խօսակցութիւնը պէտք է սկսի միայն հարսանիքի միւս օրը, թնդ չնեղանայ, ես նորա ուզողը շեմ... Մէկ ախկինի պէս բերեն, նստացնեն կողքիս և ամբողջ ժամերով լուս ու մունջ մնայ, իբրև թէ վայախի կառը է, միայն գէմքն ունենայ մարդու, ուրիշ սշինչ: —Օրինրդ, հայ կամենմամ էք: (Ներկայացնելով երեւակայական օրիորդին, զլուխը բացասական շարժում է:)

—Օրինրդ, ջուր կամենմամ էք: (Կոյն խաղը:) —Ռւրեմն ի՞նչ էք կամենում, օրիորդ: (Աջքերը վայր թողնելով, երեւակայական օրիորդի պէս ամօթահարփում է:) Ես կը տրաքվեմ խօ: (Քեթեւանը ծիծաղում է:) Ծիծաղվիր: Տասն անդամ լաւ է ինձ խեղդելու տանեն, քան թէ այդպիսի բանի հանդիպեմ..., էլ ինչն համար է նորա ուսումը, եթէ իրավ ուսում առած է, ինչպէս հսային ասում է:

ԳԵԹԵՒԱՆ

Ի՞նչ գ'ուզէ ուսում առած ըլի, վուրթի, միր հառ նամուսավուր ախշիկն ուրիշ է:

ԳԵՈՐԳ

Է՛հ, նամուս... Միթէ նամուսն ու ամօթը նորանումն է, որ մարդ մարդու հետ չխօսի: Այսպիսի էլ ժողովուրդ կը լինի՝ աշխարհիս երեսին. հակուսար նոր, կերակուրը նոր, շինութիւնները նոր, մօղաները նոր և նոր, իսկ հասկացողութիւնը էլի էն, էլի էն, էլի էն... Մարդ կը զժվի այսահեղ, ճշմարիտ:

ԳԵԹԵՒԱՆ, նեղացած:

Էլ քու զլուխ չունիմ. զնա ինչ գ'ուզիս արա... Վիհ, զինացվա:

ԳԵՈՐԳ

Փառք Աստուծոյ, հինց գորանից պէտք է սկսէիր... (Կատում է մօր կողքին:) Գու մէկ երկու շաբաթ համբերիր, զէդի. ինչպէս և լինի ես անզատնառ կը ծանօթանամ այն աղջկայ հետ և այն ժամանակ կը տեսնենք:

ԳԵԹԵՒԱՆ

Ախ, վուրթի, ինչիր իս ասում. ախար քի մօդ օրթում չկերմւ էրէկ իսային, վուր չուլս-հինգ տանէմէն գժուած ուզում ին էն ախչկան... ի՞նչ աղանչանք պազանտաքով կոսրիլ իմ, վուր էս էրկու օրը մուլափ տան... Խիլք ունիս ձեւնէմէտ մի թողնի, թէ չէ վիրչը դառ ու գարզակ կու նստիս, Աստուծ զիդինայ:

ԳԵՈՐԳ, վեր կենալով եւ բարկացած:

Ում ուզենան, թնդ տան, էլ ես կին չեմ ուզում բոլորովին... Ոտս կոտրուել էր և երէկ այն թաղովը չէի անց կացել: Մարտիրոսեանցի տուն չզառաւ ինձ համար, ցաւ դառաւ, էլի:

ԳԵԹԵՒԱՆ, երկար լուռթիւնից յիսոյ:

Է՛հ, վուրթի, չէհէլ օրս խաւրեցըիլ իմ քիդ համա, ումբըս սիվցըիլ իմ, զիշիր ցերեկ լենքտ ու էրգէնքդ չափիլ իմ, բերիլ իմ մարթ իմ շինի ու վիրչը մէ քու թազին ու փսակին էլ չիս արժանի անում ի՞նձ:

ԳԵՈՐԳ

Ախ, զէդի, վերջացըն թէ Աստուծ կը սիրես:

ՔԵԹԵԻԱՆ

Էտէնց կուլի, վուրթի, հալլաթ իմ ճակտին էտ
էր զրած, վուր էլ լաւ օր չտեսնիմ:
ԳԵՈՐԳ

Օ՛Հ, Աստուած...

ՔԵԹԵԻԱՆ, աչքերը սրբելով:
Զարշաբանքով ապրիլ իմ ու մեռնելիս էլ քու
դարդը պիտի տանիմ հիւս, վուրդի:
ԳԵՈՐԳ

Էլ չեմ կարող դիմանալ... (Յարկացած գնում է
մինչեւ աջ դուռը, յետոյ վերադառնում:) Դու գիտես որ
ես քեզ շատ եմ սիրում, դէզի, կեանքս չեմ խնայիլ
քեզ համար, եթէ հարկաւոր լինի. բայց այս գործը քո
գործը չէ, դու իզուր ես նեղանում... Օ՛Հ, գլուխս
սկսեց ցաւել, ճշմարիտ, դուրս գնամ մի փոքր ինձ
հովի տամ:

ՔԵԹԵԻԱՆ, վեր կենալով:

Գնա, վուրթի, գնա. զնա մէ քիչ ման արի:
Օզունդ քու գլուխը շցաւի, թաղ իմ գլուխը քիզ շա-
րի փուխ ըլի:

ԳԵՈՐԳ

Ալս, իմ բարի, իմ քաղցը դէզի ջան, քո երախ-
տիքը ես երեք չեմ մոռանալ, ես քեզ շատ եմ
պարտական... (Ճպտալով:) Մի վախենար, դէզի, դու
իմ թագը շուտով կը տեսնես:

ՔԵԹԵԻԱՆ, գրկում է Գէորգին:

ԳԵՆԱԳՎԱԼՈՍ դէզէն, վուրթի:

Պատկեր:

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ, մտնելով դիմացի դռնից:

Բարի իրիկուն ձիզ:

ՔԵԹԵԻԱՆ

Ասծու բարին, պարուն հսայի:

ԳԵՈՐԳ

Բարի, հսայի:

ԻՍԱՅԻ

Փառք Ասծու, մէ դէզա ու վուրթի տեսայ էլի
մէկսմէկու վաթըթած. էրեսում է Ասծու աճկը չէ
հիւսացի միբ քախկէմէն:

ՔԵԹԵԻԱՆ

Հա, իմ վուրթին ինձ խիստ է սիրում: Համեցէք
նստի, հսայի ջան:

ԻՍԱՅԻ

Լաւ տղայ ունիս, դէզի ջան. Աստուձ զօրացնէ:
(Գէորգին:) Աբա, Գիօրգի ջան, ինչ իս տալի, վուր
քիզ ուրախացնիմ:

ԳԵՈՐԳ

Էլի նոր բան կայ:

ԻՍԱՅԻ

Նուրն էն է, վուր Գարասիմ եակուիչն էկիլ է,
ուզում է քիզ տեսնի:

ԳԵՂԻՔ, զարմացած:
 Նա այստեղ. այ բան... Գնա ասա՞ շնորհ բերէ,
 ինդրեմ:
 Վուրս է զնում աչ դռնից:

ՏԵՍԻԼ Դ

ՔԵԹԵՒԱՆ, ԻՍԱՅԻ

ՔԵԹԵՒԱՆ

Ուր է թարժաժ էլի, գէնացվալէրի:
 ԻՍԱՅԻ

Այ, դէղի ջան, էլախտ էն քու պարուն տղէն
 ինձ կտրականն ասաւ, վուր ինչըու ֆարասիմ եա-
 կուլիչին չճանչնենամ, նրա տուն վուտս չիմ կանա
 դնի, կ'օսէ. Կս էլ յիդ ասի: Ուզում էի տանս մէ
 լաւ ճաշ սարքի, վուր է մէկսմէկու ռաստ բերիմ.
 ամա չունքի շտապով բան է, էն խիդմ մարթը մէ
 բաշ զգակը վիկալաւ ու էկնւ: Ճամփին դիփ էն էր
 ասում՝ թէ խոնարութինը Ասծու զուրեկան բան է,
 կ'օսէ, ու հիմի զուսը մնում է:

ՔԵԹԵՒԱՆ

Պնայ իմ աճկին, զուսն մւր իս թողի:
 ԻՍԱՅԻ

Տուն էկայ վուր դօկլադ անիմ:
 ՔԵԹԵՒԱՆ

Գնա շուստ, իսայի ջան, ինդրէ վուր շնորհ բե-
 րէ. ամութ է, ինչ կ'օսէ էն մարթը:

ԻՍԱՅԻ
 Էս սահաթիս:
 Դուրս է զնում դիմացի դռնից, իսկ աջից մտնում է
 Գէորգը սեւ սերթուկով:

ՏԵՍԻԼ Ե

ՔԵԹԵՒԱՆ, ԳԵՂԻՔ

ԳԵՂԻՔ

Զիս զարմանում, զէդի:

ՔԵԹԵՒԱՆ

Արա, վուլթի, տիս ինչ խոնար մարթ է էլի:
 ԳԵՂԻՔ

Ճատ լաւ, բայց այդ ինչ է նշանակում:
 ՔԵԹԵՒԱՆ

Բախտն էկիլ է, դուանդ չոքիլ է, վնւլթի:

ՏԵՍԻԼ Զ

ՆԲԱՆՔ, ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ, մտնելով դիմացի դռնից:

Բարի իրիզուն ձիդ:

ՔԵԹԵՒԱՆ

Ասծու բարին. համեցէք:
 ԻՍԱՅԻ, որ հետեւում էր կարապետին, վերցնում է նրա
 վերարկուն, ձեռնափայտն ու զիսարկը եւ առաջ դալով:
 Այ, դէղի ջան, էս է իմ ասած մարթը. էս էլ,

Դարասիմ եակուլիշ, իմ գոված տղին. էլ անումն ու
ասկի ինչ ասիմ, խօմ գուք էլ լաւ զիդիք:
Կարապետի իրեղէնները դարսում է դիմացի դասն
մօտ դրած աթոռի վրայ:

ԳԵՈՐԳԻ, առաջ զնալով, կարապետին ձեռք է տալիս:
Ճատ ուրախ եմ... նստեցէք խնդրեմ:
Աթոռ է առաջարկում:

ԿԱՐԱՊԵՏ

Ճատ ապրիս, վուրթի. (Ո՞չ եւ ճախ նայելով:) ամա
համարցակութինս բախչեցէք, վուր դէմ ու դէմն
էկայ, ձիղ թարժած արի:

ԳԵՈՐԳԻ

Ի՞նչ էք հրամայում, սլաքո՞ն, զուք մեղ բոլորովին
պարտաւորեցնում էք: (Աթոռը ցոյց տալով:) Հրամայեցէք
խնդրեմ:

ԿԱՐԱՊԵՏ, ողջունելով Գէորգին և կիսաձայն:
Ճնորակալ իմ, վուրթի: (Քեթեւանին, նստելով:) Նի-
դութին չտամ ասի, իմ քուր... Վա, համեցէք, Է:
Ամենքը նստում են՝ քեթեւանը տախտի վրայ, իսկ
միւսները աթոռների վրայ, այնպէս որ կարապետը
զտնվում է քեթեւանի և Գէորգի մշտեղը,
բայց սրանից ճախ և փոքր ինչ նետու՝ խային:
ՔԵԹԵՒԱՆ

Ետ ինչ խօսկ է, սլաքո՞ն, վուր զուք իք հրա-
մանք անում: Դուք բախչեցէք իմ տղին, վուր ինչու
էտի նիդացըլուց ձիդ:

ԳԵՈՐԳԻ

Իմ մայրը մի փոքր սխալվում է, սլաքո՞ն. Իս բո-
լորովին միտք շունէի ձեղ այդքան նեղութիւն տա-

լու, բայց և շատ ուրախ եմ որ ձեղ մեր առնն եմ
ահսնում այժմ և միջոց եմ դանում ձեղ հիտ ծա-
հովանալու:

ԿԱՐԱՊԵՏ

Ապրիս, վուրթի, ապրիս:
ԻՍԱՅԻ

Արա, Դարասիմ եակուլիշ, սուտ էի տառմ վուր
զիդուն է:

ԳԵՈՐԳԻ, Խայուն, դժոխ:

Ի՛ՍԱՅԻ...

Գնում է սեղանից թաշկինակը վերցնելու:

ԿԱՐԱՊԵՏ

Իմ թամահութինն էլ զրա ուսումն է, Խայի,
թէ չէ զուն լաւ զիդիս ուզողնիր շատ կան: (Քեթե-
ւանին:) Ճատ լաւ տպայ իս ունեցի, զէդի ջան, խիստ
էլ զավում ին... Տէրն էլ լաւ մարթ էք, օղորմած
հարին... իմը լաւ բարեկամ էք... հայիփ վուր վաղ
փչացաւ:

ՔԵԹԵՒԱՆ, խորը հողոց հանելով:

ԷՇԻ...

ԿԱՐԱՊԵՏ, շարունակելով:

Ամա էլի փառք տնւ Աստծուն, զէդի, վուր էս
հանդի մխիթարութին է թողի քիզ համա: (Գէորգին,
որ վերապատճում է իր տեղը:) Ճատ ապրիս, վուրթի,
շատ... իմացայ վուր մօրդ պատիւն էլ չիս մոռա-
նում. Խային ասաւ հիմի:

ԳԵՈՐԳԻ

Ես միայն իմ պարտականութիւնն եմ կատարում
զէպի ծնողս:

ԿԱՐԱՊԵՏ

Զօրանաս, վուրթի: Հօրն ու մօր պատիւ տալը
Ասծու պատուիբանք է:
ԳԵՈՐԳ

Ի հարկէ:

ՔԵԹԵՒԱՆ

Աստուձ քու վուրթկերանց պատիւն էլ անտակաս
անէ քիմէն:

ԿԱՐԱՊԵՏ

Էտ ասա, դէղի ջան. սէրն ու պատիւն անց էլ
Բնշ պիտի տան միզ միր վուրթիքը: Ե՛հ, փառք
Ասծու, դարթնի մէ ախչիկս մնացածնիքը ջեր էրե-
խերք ին. ամա ումիկ ունիմ Ասծէմէն վուր նրանք
էլ իրանց մինձի պէս խոնար ու պարկիշտ դուս
կանգնին:

ՔԵԹԵՒԱՆ

Աստուձ քիզ բախչէ մինձիտ էլ ու պսակներուտ էլ:
ԿԱՐԱՊԵՏ

Աստուձ սրան էլ (Մատնացոյց անելով Գէորգին:) քիզ
բախչէ: Դուրթ է, ջեր իրան լաւ չիմ ճանչնա, ամա
շատ լսելոք է ժաժ դալի:
ԳԵՈՐԳ

Օ՛հ, սլարոն, ես այդքան զովասանութեան ար-
ժանի շեմ:

ԿԱՐԱՊԵՏ

Բատ մվ է արժանի, վուրթի, վուր դուն չիս:
(Գիմեւանին:) Քու արիւը, քէփս էկաւ վուր իսալին
ասաւ՝ թէ էնդուր չէ դալի ինձ մօդ, վուր ջեր ինձ
չէ ճանշնում... Ես էլ իմ մտկումն ասի, թէ շունքի

սա լայիդ չէ անում ինձ մօդ դալլ, 'Ես կ'էնամ:
Աւետրանի խօսկը կատարեցի, վուր ասում է, թէ
«'Եւ ով որ իր անձը կու խոնարեցնէ, ասում է, նա
բարձրացուցանէ իր հորին,» կ'օսէ:
ԻՍԱՅԻ, Գէորդին:

ՏԻԱ ԲՆՀ ՄԱՐԹ Է:

ԿԱՐԱՊԵՏ

Վաղ խօմ շիմ ժաժ էկի, վուրթի, վուր էկայ:
ԳԵՈՐԳ

Ընդհակառակը, պարոն, մեղ յատուկ բախտաւո-
րացրիք ձեր զալովլը: Բայց ինչո՞ւ էք կարծում, որ ես
արհամարհեցի ձեր տունը. իրրե անծանօթ՝ դժուա-
րանում էի դալ:

ԿԱՐԱՊԵՏ

Խիստ զբուստ իս տառում, վուրթի. ամա դէմ ու
դէմը խօսինք, ինչ իս ուզում ինձմէն, մէ ասա, հինց
ապրիս... Ախչկաս տեսիլ իս, համիկ իս, հիմի զնա-
կօմիտ էլ իս ուզմամ... ջուխտ աճկիս, 'Ես թաքցնե-
լու ապրանք չունիմ:

ԳԵՈՐԳ

Ճատ չնորհակալ եմ, Գարասիմ եակուլիչ: Ճշմա-
րիտն ասեմ, ես ձեր և ձեր աղջկայ մասին շատ դո-
վասանքներ եմ լսել... (Խաային առանձին երեսը իսաչ է
հանում:) և կարելի է մեր յանկութիւնները կատա-
րուեն, եթէ ի հարկէ մենք միմեանց հաւանինք:

ԿԱՐԱՊԵՏ

Քու բանը դուն զիդիս, վուրթի, ամա իմ աղջկը
վնանց չի հաւանի քիզ:

ԻՍՍՅԻ, առանձին:

Վահն, ջանն էլ չի վաղի՛:
Գէ՛ՈՐԴ

Այդ յետուայ բան է, Դարասիմ եակուլիչ:
ՔԵԹԵՒԱՆ

Էլ մի էրգալացնի, վուրթի. ամութ է, քու արիւ,
Էս պատուական մարթուն էլ էս զաղա նիղա-
ցնում իս:

Գէ՛ՈՐԴ

Ա'խ, մայր...

ԻՍՍՅԻ

'Ես ու իմ հոքին դրուստ իս ասում, զէղի ջան:
ԿԱՐԱՊԵՏ

Հէ, ինչի, զէղի ջան, շատ լու է խօսում քու
տղէն. ախչիկս էլ սրա հանդին է մինձացած ու բախ-
տաւուր է, վուր սրա պէս տղի է ոստ զալի... էրհ-
ւում է վուր իր համա սրտի ննդիր է պտուտում, չէ
թէ վուղ ու բաժինք:

Գէ՛ՈՐԴ

Ջատ ուղիղն էք հրամայում, պարսն. վողի հա-
մար ամուսնանալը, իմ կարծիքով, շատ անվայիլ
բան է:

ԿԱՐԱՊԵՏ

Ախար իմացիլ էի էս հանդի տղայ է, վուր ՚ես
էլ էսէնց զայիմ իմ կտի, է... Աստուծ զիկինայ,
զէղի, 'ես մենակ վիսութենով չիմ ուղում սրտն...
Աշխրքի բան ու զուրծ ունիմ: Վուրթիքս, էլախս էլ
ասի, պստըկնիր ին ու քաղաքը էնէնց է զառի վուր
էլ օչովու աւտալ չէ ըլում... Սրա զալամը թանգ

աժէ ինձ համա, զէղի... իմ կայինքին ՚ես չիմ կա-
նացի աճկը հասցնի՛, թնդ սա կառավարէ. միթամ
իրը չի ըլի, թէ ինչ... Արի, վուրթի, արի, չէ թէ
մէ անդամ, տասն անդամ. հիդը նստի էլ, վիկացի
էլ. գ'ուղիս հայերէն խօսի հիդը, գ'ուղիս ոսերէն.
վուանցուցեվար էլ իմանում է, ամա ջեր համարցակ
չէ կանացի. պօրառուպիանը խօմ, մէ պօլիէք ու վալ-
ցիր կ'օծէ, քու արիւը, վուր քէփի զու քայ: Աշխրքի
վուղ իմ մխսի վրէն. ջեր ֆավրի պէնցիօնումը, ի-
ժում տանը: Արի՝ էսօր, էքուց, էլօր, 'եփոր մէ խօս-
կով քէփի աայ, գ'ուղիս մէ շափաթ, գ'ուղիս էրկու
շափաթ, թէ հաւնի՛ս նշանը տնւ, վուրթի, թէ չէ ու
զուն քիզ համա, իմ ախչիկն ինձ համա:

Գէ՛ՈՐԴ

Գուք ձեր խօսքերով ինձ բոլորովին զրաւում էք,
Դարասիմ եակուլիչ, իմ խնդիրն էլ հէնց ալդ է:

ԻՍՍՅԻ

Թէ ասում էիր, Դարասիմ եակուլիչ, վուր թէ էս
մէ էրկու օրումը չի ըլի, թնդ իսկի էլ չըլի, կ'օսէ,
ախչիաս անումը չկոտրի, կ'օսէ, ու հիմի էրկու
շափաթ վանդա էլ իս տալի՛. ախար ինձ սուտ մի
զուս բերի սրանց մօդ, է:

ԿԱՐԱՊԵՏ

Սուտ ինչի՞ իս, ախպէր, իմ խօսին է՝ թէ էս
օրերումը բանը չի վիրշացնի, էլի վուր չէլած է ու
չէլած, ու թէ չնուր կու բերէ ու ախչիաս էլի էնէնց
կու հաւնի, վունցոր մէկ հաւնիլ է, ինչ իմ հոքում,
'եփոր ուղենայ, էն շախը նշանը տայ... Վուր իմ ապ-
րնքէմէն ումիկ չունենամ, խօմ էսէնց էլ չիմ ժաժ զա:

ԳԵՂՐԳ

Յատուկ պարտաւորում էք ինձ, Պարասիմ եակուիչ:

ԿԱՐԱՊԵՏ

Ինչ ասի, արխային կացի, վուրթի ջան, փևայ ջան:

ԳԵՂՐԳ, ԺՎՈՏԱԼՈՎ:

Է՞հ, պարոն, զեռ վաղ է ինձ փեսայ կանչելը. այդ շատ հեռու գնացիք:

ԿԱՐԱՊԵՏ

Բաս ի՞նչ իս, վուրթի, վուր փեսայ չիս. դուն հէնց գիղիս, թէ հիմի պիտի դառնաս իմը փեսայ: 2է, վուրթի, էս բանը մարթու բան չէ, 'Երգնքումն է շինվում:

ԻՍԱՅԻ, նայելով դեպի Երկինքը:

Մեռնիմ նրա գօրութենին:

ԿԱՐԱՊԵՏ

Ասածու կամքը վուր չէր էլի, վուրթի, էրէդ իմ ախչկան չէիր ռաստ գա քուչումը:

ՔԵԹԵՒԱՆ

Փուխ էհամ նրա օդորմութենին:

ԻՍԱՅԻ, Կարապետին:

Վունց թէ քուշումը, թէ կ'օսէ դռանն է աեսի:

ԿԱՐԱՊԵՏ

Հա, իժում իմացայ վուր մօղիկ մաղաղիումն է էլի իր դէղիղի հիդ:

ԳԵՂՐԳ

2է, ես նրա հետ միայն մէկ վորբիկ ծառայ տեսայ:

ԻՍԱՅԻ, Կարապետին:

Դուք վուրք ծառայ չունիք, Պարասիմ եակուլիչ: ԿԱՐԱՊԵՏ

Հա, չէ... դէղիղի պստի բիջն է էլի: ԻՍԱՅԻ

Իժում պստի բջի աբով թաղնում իս դուսը ախչըկամտ:

ԿԱՐԱՊԵՏ

Թէ վուր ասի վուր իր դէղիղի հիդ է էլի, օխնած հոքի. նա էլ ճամփէմէն ուրիշ տիզ է գնացի... Է՞հ, բախչեցէք, (Ա.եր կենարվէ) վլխացաւութին տվի ձիզ: (Ամենքը վեր են կենում) չիմի դուն զիդիս, վուրթի, 'եփոր չնուր կու բերիս. ինձ համա մինձ ուրախութին կու'լի: (Գէորգը ողջունում է:) Ամա թէ Աստուձ կու սիրիս, վիդիաներէմէն ձեռը վիկալ... Էնէնց, իրիգնապահը, էս օրերումը, 'եփոր քէփդ տայ... Գիղիս փողացի մարթիք ինք, վուրթի, ցերեկով դիփ բանումն ինք:

ԳԵՂՐԳ

Ջատ լաւ, շատ լաւ:

ԿԱՐԱՊԵՏ

Արա, 'եփը մնամ քիզ, վուրթի: ԳԵՂՐԳ

Երր կամենաք, ես այս օրերս բոլորովին աղատ եմ: ԿԱՐԱՊԵՏ

Գիղիս լին է, վուրթի, արի ցէրէմօնիէքը դէնը թողնինք, հէնց էսօր էւէտ շայու վրայ համեցէք ինձ մօղ... Բա, լին կ'օսիս, լաւ շիմ ասում:

ԳԵՂՐԴ

Ինչու չէ, մեծաւ ուրախութեամբ, Գարասիմ եակուլիշ:

ԿԱՐԱՊԵՏ

Բաս կու մնամ քիզ, վուրթի. Խսայու հիդ մէտի չնուր կու բերիք... էտէնց... (Գէորգին ձեռք է տալիս:) Բարով մնաս ու բարով դաս... (Քեթեւանին:) Դուք էլ բարով մնաք, գէղի. Աստուձ վիրշեներուս բարի անէ: Խսային հազցնում է կարապնտի վերարկուն եւ տալիս է նրան զլխարկն ու ձեռնափայտը:

ՔԵԹԵՒԱՆ

Ճնորակալ ինք, ջափա քաշեցիք... Աստուձ ձիր մէ օրը հազար անէ, վուր իմ վուրթու սիրալ հանգըստացրիք: Իմ անտիս քվիրը շատ հարց ու բարով կ'օնիք իմ մազիէր:

ԿԱՐԱՊԵՏ

Զուխտ աճկիս, մնաք բարով:

ԳԵՂՐԴ, հետը զնալով մինչեւ դուռը:

Գնաք բարով:

Կարապետը դուրս է գնում դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ Ե

ՔԵԹԵՒԱՆ, ԳԵՂՐԴ, ԻՍՍՈՅԻ

ՔԵԹԵՒԱՆ

Գնա ու գնա, վուրթի, բախտաւոր իս էլի:

ԳԵՂՐԴ

Աստուծ տար որ այդպէս լինէր:

ԻՍՍՈՅԻ

Ճը', վմնից է Խսայու բերած խարարը. հիմի էլ վիս մարթ լիմ:

ԳԵՂՐԴ

Ջատ լաւ մարդ ես, Խսայի ջան, հիմի տեսնենք աղջկան ինչպէս կը հաւանենք:

ԻՍՍՈՅԻ

Է՞հ, զլխէմէն մի կցի, քու հօրն օղորմի. հաւնած էլ է ու պրծած էլ:

ԳԵՂՐԴ

Լաւ, լաւ, կը տեսնենք:

ԻՍՍՈՅԻ

Էլ լինչ տեսնինք, ախպէր, աճկով տեսածիս չիս աւանում, արի հիմի անդազվի իմացի: Դուն ինձ ասա, չն հանդի հօր վուրթին վաղը կուլի:

ԳԵՂՐԴ

Ճշմարիս որ զարմանալի մարդ է եղել Գարասիմ եակուլիչը... ես նորան սիրեցի:

ԻՍՍՈՅԻ

Բաս նս էլ լինչ էի ասում:

ՔԵԹԵՒԱՆ

Ճալրաթ Աստուձ քու հօր վարցին է վջարում, վուրթի, վուր քիզ համա նուր մէկանց էտ հանգի հէր է զրգում... Խիզճ օղորմած հոքու խօսկ ու ջուզարն ունէ զրուստ. կ'օսիս թէ իննձուրը կէս իս արի... (Աչքերը սրբելով:) Ինչ անիս, պիտի ջրատարը սաղ էր էլի, վուր նա էլ ուրախացիլ էր:

ԻՍՍՈՅԻ, ձեռքը բարձրացնելով:

Նրա հոքին էնդի իմանում է զիփ, գէղի:

ՔԵԹԵՒԱՆ

Նա բարեխօս ըլի Գիօրգուս համա, թէ չէ իմ
միղաւոր բերնով ՚ես ի՞նչ արժանի իմ:
ԳԵՈՐԳ:

Միրտղ ուրախ պահիր, դէղի ջան, Աստուած ո-
ղորմած է:

ՔԵԹԵՒԱՆ

Բմբռով կշտանաս, վուրթի:
ԳԵՈՐԳ, զնալով:

Իսկոյն, իսայի ջան:

Գուրս է զնում աշ դռնից:

ՏԵՍԻԼ. Ը

ՔԵԹԵՒԱՆ, ԽՍԱՅԻ

ԻՍԱՅԻ

Գուհանամ Քիզ Աստուձ... Բախտաւուր կնիկ իս,
դէղի, էս հանգի վուրթի ունիս. հիմիկան տղերքն
իրանց ծնողներուն էլ էտէնց շին սիրում, վունցոր
Գիօրգին քի սիրում է:

ՔԵԹԵՒԱՆ

Մեռնիմ նրա արեւոն, զարթնի նրան մի ունիմ
աշխաքամը. վից տարեկան էրեխայ մնացիլ է ձե-
ռիս, իմ շունչն ու կենթանութինը նա է էլի: Համե-
ցէք նստի, իսայի ջան, յօրէս շուրը կու հաքնէ. ՚ես
էլ մէ Փեթխայինն իմ ուղում զիվիր գնա. նրա օղոր-

մութինը փրկէ ու ազատէ իմ Գիօրգուն ամեն ցա-
ւէմէն:

Մի բանի քայլ զնում է:
ԻՍԱՅԻ

Քու բարի աղօթկն ըլի դիվունիս վրայ, դէղի:
Նստում է սեղանի մօտ. զմացի դռնից մտնում է
Խամիկրին դաթիրայով:

ՏԵՍԻԼ. Ը

ՆՐԱՆՔ, ԽԱՄՓԵՐԻ

ՔԵԹԵՒԱՆ

Օ՛հ, լուսը քու տեսնողին:
ԻՍԱՅԻ, նստած եւ առանձին:

Էս անիծածն էլ վմւրդի էր հիմի:
ԽԱՄՓԵՐԻ, խօսում է միշտ շտապ-շտապ:
Ջէմօվդի փէխի, գծալորդէթ Ղմէրթի. փէխի
չէմի, կվալի անգէլօղիսա: *) Բարիգուն, Աստծու բա-
րին, քէփէներուտ վմւնց է, ի՞նչ իք անում, ի՞նչ բա-
րին հարցնիմ, վմւնց իք, վմւնց կաք, իսու լաւ իք
դիվունքդ:

Դաթիրան վայր է զցում աթոռի վրայ:
ԻՍԱՅԻ, առանձին:

Սարակէլ է:

*) Վրացերեկն է:—Առս գրի ներս, Աստուած օգնէ ձեզ.
Առն իմս, հետքը հրեշտակինը:

ԽԱՄՓԵՐԻ, տեսնելով խայռուն:
Էս մարթն ով է... քա, խայլին չէ:
ՔԵԹԵԻԱՆ
Հա, իմ Գիօրդու խայլին է:
ԽԱՄՓԵՐԻ
ՄԵրաշ չճահնչըցայ: (Խայռուն:) Ի՞նչ բարին հարց-
նիմ: (Խայլին կամնում է սոփ կանգնել:) Ո՞ւր իս նի-
դանում, գէթաղիա, համեցէք նսախ:
ԽՍԱՅԻ, նստած,
Փառք Աստծու, շնորակալ իմ:
ՔԵԹԵԻԱՆ
Էս ուր իս կորի, քա, վուր բջի ջանը մաշվեցաւ
շատ քու պտուտելէմէն:
ԽԱՄՓԵՐԻ, նստելով տախտի մօտ անոսի վրայ:
Տաք-տաք բանումն իմ, Քեթեան ջան. իմ տալուշ
տղայ Կօնօի համա ձլիւ մէ ախշիկ զթայ, տառ թու-
ման առաշ իմ, քու արիւը:
ՔԵԹԵԻԱՆ, նստում է տախտի վրայ:
Գիղէի վուր էտ հանդի բան կու'լի, է:
ԽԱՄՓԵՐԻ
Ջանս գնաց էրէգվան դէսը. Գիօրդին պըծնի ա-
մեն ցաւէմէն: Ո՞ւր է, տանը չէ իմ թայզուլը:
ՔԵԹԵԻԱՆ, ժամալով:
Յօրէս դուս զու քայ, տանն է:
ԽԱՄՓԵՐԻ
Վէնացվալէ նրա պէտլած ջանին. ուրիշ իմքին է,
Քեթեան ջան: Աշխրքի տղերք իմ տեսնում, մէկը չու-
նէ նրա շնուրն ու լազաթը. սուքըսում է միզ գիփու-
նիս: Բաս չէ ու Կօնօն կու'լի. հոքիս հանից դրուստ,

էլի: Խօմ գիղիս նրա ափալը, ծանդը ժաժ գալ գի-
ղէ. ջեր մուլափ ու, ջեր բան ունիմ ու, ջեր էսէնց է
ու, ջեր էնէնց է ու... նմն ինձ հասաւ ինչըու Խօջի-
Վանքը զուս տարայ: Հիմի էնդի՝ մէկ անցկացնիւ
էրիտ, էրկու անցկացնիւ էրիտ, հալից ու մաշից խիղճ
ախչկան. հըա, հըա, հըա, հըա, վիրչը բէղէն էրիտ:
ԽՍԱՅԻ, առանձին:
Զիմէն մարթ վէր կու բերէ: Էս անիծտծը:
ԽԱՄՓԵՐԻ, շարունակելով:
Ծամալօ օմքինը կու ատիմ տշխաքումը: (Ծաղրե-
լով:) Բամ, ըամ, ըամ. Ջանդա բէզար էլայ գրուստ,
Էլի... Ըլի, Աստուծ անէ նրա գիւանը: Տղէն պիտի
տղայ ըլի, չախմբիսի սլէծը վիր ըլի անում... Զնոսվ
ձէթիր ին, Քեթեան ջան:
ՔԵԹԵԻԱՆ, հանդիսաւ:
Խամփերի, քիզ բան հարցնիմ...
ԽԱՄՓԵՐԻ, խօսքը կտրելով:
Հա, զուրթ. ի՞նչ իք հայհարա կանչի, փափէն
խօմ չէ ստոի:

ՏԵՍԻԼ, Ճ

ՆԲԱՆՔ, ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ, զուրս զալով աջ դոնից զարդի սեւ ժիլէտով և անպա-
փարափով, սեւ փողպատը ձեռքին և բամկոնակը հաղնելով:
Գորս պլատասխանն էլ զու ասա, էլի, գէղիղա.
այդ ինչնը ևս պատմում: Փողպատը կապում է:

ԻՍԱՅԻ, առանձին:

ԵՐԻԿԱՌ...

ԽԱՄՓԵՐԻ, վեր թոչելով տեղից:
Գյնացվալոս զէդիդէն: (Գրկում է Գէորգին:)

Ասկի ուռքար ջահ, վունց իս, վունց:
ԳէՌՐԳ

Լաւ եմ, զէդիդա, դու ինչպէս ես:
ԽԱՄՓԵՐԻ

Քի լաւ ունենամ, վուրթի, ինձ ըա միճիրս: (Զեռ-
քով խփում է զրպանին:)

Այ, էքուց տաս թուման նի-
կալայի մանէթը կու չխչխկայ էսաի. միր անգալ
կօնօի համա կլէկն ու նիշադուրը հաղրիլ իմ, ուղում
իմ նլէպուղինց ախչկայ հիդ լէհէմի. դիվ էրկու սա-
հաթ չկայ բէլզէն տալ տվի, քու արիւը:

Դասում է իր տեղը:

ԳէՌՐԳ

Բանը վերջացրել ես, զէդիդա, էլ լէհէմելը մըն է:
Խաղում է աթոռով:

ԽԱՄՓԵՐԻ

Բէլզէն ցամաք բան է ջեր, ցաւդ տանիմ. նշանը
վուր կու տայ, էն չախը կու լէմմի:
ԳէՌՐԳ

Նշանը որ լէհէմուել է, ուրեմն պսակին էլ մէկ
ուրիշ անուն զբած կը լինես:

ԽԱՄՓԵՐԻ

Փսակը խօմ յաւիդենական ջնջիլ է, անումիտ
մեռնիմ. 'Ե՞փ կու'լի մէ քու թագին էլ արժանի անիս,
վուր մէ չաղ քրթամ վիր խփիմ. հարուր թումնէն
պակաս չիմ անի, քու արիւը:

ԻՍԱՅԻ, առանձին:

Հիմի էս էր պակաս:
Քեթեիւն, նեղնական ձեւով:

Ինըսուն ու ինը վուր ըլի, բօղաղիկ կու կանգ-
նի, այ:

ԽԱՄՓԵՐԻ

Ինչի լայիդ կ'օնիմ:
ԳէՌՐԳ, ժպտալով:

Լաւ զէդիդա ես եղել, ես ու իմ Աստուածը. իմ
զործումն էլ պէտք է կաշտաք վերցնես և ինձ խափե՛ս:
ԽԱՄՓԵՐԻ

Քիդ մւր իմ խափում, չարդ տանիմ, քիմէն խօմ
չիմ ուղում. քիդ ինչ վուր քու աներանցմէն աւելի
վուր զուս զջլիմ: Գուն ումը զ'ուղիս հաւնի, էտումը
չիմ խառնվի, օղունդ սիրուն կի ըլի, զըղճերու զը-
լուխ չունիմ: Օ՛յի, տա, տա, տա, տա, տա...

ԻՍԱՅԻ, առանձին:

Այ, անումդ կարէ Աստուձ:

ԽԱՄՓԵՐԻ, շարունակելով:

Ամա ինչըս հարուր թումանը չթափ տալ տամ,
դուն չմեռնիս վուր վուտդ չիմ զուս դնիլ տա. թնւղ
ջանէներուն վազի, համբրին՝ քիդ ինչ, քու բաժնքի
վուդէմէն խօմ չիմ ուղում:

ԻՍԱՅԻ, առանձին:

Քու տունն Աստուձ քանդէ:

ԳէՌՐԳ

Ե՞հ, լաւ է, զէդիդա, միթէ կարելի է այլպէս
խօսել:

Գնում է զէպի սեղանը եւ ծխախոտ վատում:

ՔԵԹԵՒԱՆ, ԽԱՄՓԻՐՈՒՆ, ԿԻՍԱԺԱՅՆ:
Ախար, ԷՆ ՄԱՐՁՆ ԷՆԴԻ ՆՍՏԱԾ Է, Ի՞ՆՉ Կ'ՕՌԵ.
ԱՄՈՒԺ ՀԵ:

ԽԱՄՓԵՐԻ, ՔԵԹԵԱՆԻՆ:
ԻՆՉԻ ԱՄՈՒԺ Է, ԷՄ ԱՊԱԺ Է. ՐԱՌ ՚ԻՌ ՄԻԽՈՂ
ՀԻՄ, ՔՍԱՆ ԱԻՂ ՀԱՎԱՐ ԾԱԼ Ու ԾՈՒՂ ԱԼՆԻՄ: ԵԼԻ
ՄԵՐԸ ԲԱՐԻ ՄԱՅ ՀԻՄԻԿՎԱՆ ՊԱՐԳԻՄԱՆԼ ՄԻՇԿԵՐԱՆԳը.
ԷՐԵԿ ՉՈՒՐՍ ՔՍԱՆ ՀՈՌՈՒ ԷՐԿՈՒ-ԷՐԿՈՒ ՄԱՆԵԺ ՎԵՐ
ՊԳԻԼ ՄԱՋԻ ՄԱՐՁԱՊԼՈՒԻ, ՔՈՒ ԱՊԻԿ ԱՐԻՆԻ ԻՄ ԱՍՈՒՄ:
ՄԷ ԱԼԻԿՆԻԿ ՍԱՐՔԻՄ, ՄԷ ԱԼԲԿՆԻԿ՝ ՎՈՒՐ ՔՈՒ ՀԱԼՆԱԾ:
ՄԷ ՄՊԱՄԱՐԴ ՉԻ ԸԼԻ ՊԱՐՁՆԻ ՍԱՊԱՆՎՐԵՐՈՒՆ: (Մօ-
ՏԵՆԱԼՈՂ ԳԷՈՐԳԻՆ:) Գ' ԱՎՂԻՍ ՎՈՒՆ ԷԼ ԱՐԻ, ՊԵՆԱԳՎԱ,
(ԳՐԿՈՒՄ Է ՆՐԱՆ:) ԹԱՂ ԽԻԺ-ԱՐՎԻՆ, ՍԻՐՈՒՆ ՄՊԱՅ ԻՆ.
(ԾԻՃԱԼՈՒՄ Է:) ՀԱՌ, ՀԱՌ, ՀԱՌ, ՀԱՌ, ՀԱՌ...

ԻՍԱՅԻ, ԱՊԱՆԺԻՆ:
Օ՛Հ, ՀՕ՛, ՀՕ՛, ՀՕ՛, ՀՕ՛...
ՔԵԹԵՒԱՆ, ԽԱՄՓԻՐՈՒՆ ՀԱՆՀ (ρօρօլա) ԱՆԵԼՈՒ:
Ը՛Հ:

ԳԵՈՐԳ
Է՛Հ, ԻՆՉԵՐ ԵԱ ԱՍՈՒՄ, ՊԵղիկա:
ԽԱՄՓԵՐԻ
ԻՆՉԻՐ ԻՄ ԱՍՈՒՄ. ՔՈՒ ՌԵՄԻԿՆ ԱԼՆԻՄ, ՔԻ ԱԼԽ ՎԻԵ-
ՍԱԳՈՒ ԷԼ ՎՄԱՐԴԻ ԿՈՒ ԱՍԱՏ ՊԱՅ ԻՆՃ: Ամեն ՍՐՓԻՐՈՒ
ՄՈԴ ԻՄ ԱՊԱՆՀԱՔՆ ԷՆ Է ԷԼԻ, ՎՈՒՐ ՔՈՒ թաղին ար-
ԺԱՆԻ անին ինճ. ԱՄԱՊԱ ՄՆԱՐԺ ԿՈՐՃ:
ԳԷՈՐԳԸ ԾԻՃԱԼՈՒՄ Է:

ԻՍԱՅԻ, ԱՊԱՆԺԻՆ:
ՏԵՐ ՕՂՈՐՄԱԾ ԱՍՈՒԱԾ:

ՔԵԹԵՒԱՆ
Ի'Հ, ԼԱՐ Է, ՔԱՌ, ՃԵՆԴ ԱՊԱՀէ, ՄԷ ԱՆԴԱԾ ՊԻՇ ԻՆՉ
ԻՄ ԱՍՈՒՄ, Է: :

ԽԱՄՓԵՐԻ, ԱՍՈՒԵԼՈՒ:
ՀԱՌ, ՊՈՎԲԺ. ԻՆՉ ԲԱՆԻ ԻՔ ԿԱՆՀԻ:
ՔԵԹԵՒԱՆ
ԹՈՂՆՈՒՄ ԻՍ ՎՈՒՐ ՄԱՐԺ ԽՈՍԻ:
ԻՍԱՅԻ, ԱՊԱՆԺԻՆ:
ԶԱՂԱՆԱԿ Է ՊՐՈՍՈՒ:
ԳԵՈՐԳ
ԴԵՂԻԿԱ, ՍՎՈՒՄ ԵԱ ՆշանսւԵԼ:
ԽԱՄՓԵՐԻ
ՀԱԼԱ, ՊԵՆԱԳՎԱԼՈՍ ԽԱՄՓԻՐԻՆ:
ԳԵՈՐԳ

ՃԵՄԱՐԻՄ, ԻՆՉԱՓԷՍ ԱՍԱԳԻՐ ԷԼԱԽՈՍ... ՀԱՌ, ԵՀԵ-
ՄՈԾԻ ԱԼԽ Է:

ԽԱՄՓԵՐԻ
ԻԺԱՄ, ԱԱԱՆԳ ԻՆՃ, թավլափիան:
ՔԵԹԵՒԱՆ
ՔԱՌ, ՄՌԵԼԱՓ ՀԻՍ ՄԱՌ. ՐԱՌ ԻՆՉԻ ԿԱՆՀԵցի, թէ
Առանց քիզ էր:

ԽԱՄՓԵՐԻ
ԻԺԱՄ, ԻՄ ՀԱՐՈՒՐ թավլամանլ:
ՔԵԹԵՒԱՆ
Է՛ԼԻ:
ԳԵՈՐԳ, յանդիմանական ձեւով:
ԳԵՂԻԿԱ:

ԻՍԱՅԻ, ԱՊԱՆԺԻՆ:
ԱՐԻ հիմի ու էշը ցլէմէն հանէ. ՎՄԱՐԴԻ ԷԿԱՒ

Էս անիծածը: (Խամփերուն:) Հարուր չէ, էրկու հարուր չիս ուղի՞ւ. ինչ կարքն է կուլի, էլի:

ԽԱՄՓԵՐԻ, վեր կենալով:

Դիմի, դիմի, 'ես կարք-մարք շիմ պիդի. էս հանգի պէտած տղին պակաս կու թողնիմ:

Գէորգը ծիծաղում է:

ԻՍԱՅԻ

Լաւ է, լաւ, մէ լաւ շալին էլ դարու կ'օնիս. 'ես կու շինիմ:

ԽԱՄՓԵՐԻ

Բաս ինչ իմ արի:

ՔԵԹԵԿԱՆ, ԽԱՄՓԵՐՈՒՆ:

Քա, մէ դէսն արի: (Առանձին:) Սիրաթս զնաց:

ԳէՈՐԳ

Ե՞ն, դէղիդա, հերիք է, Աստուած կը սիրես: (Խայուն:) Խսայի, դու սորա հանաքներին ականջ մի դնիր:

ԽԱՄՓԵՐԻ

Խսկի էլ հանաք շիմ անում. մէ ինձ ասէք՝ շադ տիդ է:

ՔԵԹԵԿԱՆ

Էրկու հազար թուման փուղ, երիք հարուր թումանի բաժինք ու հինգ տարով սարքած կարքած տուն. ախշիկն էլ՝ սիրուն, ջէհէլ, ուսում առած, լաւ հօրն ու մօր վուրթի ու լաւ սիրելի բարեկմի տէր:

ԽԱՄՓԵՐԻ

Վահան, վահան, վահան, ծվահան է: (Գրկում է Գէորգին:) Հալա, դէնացվալոս դէղիդէն, դուրթ է ասում Քեթեկանը:

ԳէՈՐԳ

2իս իմանում որ դէղին սուտ խօսել չէ սիրում: Յետոյ որ դիտենաս, դէղիդա, ինչ սիրուն է, ինչ սիրուն, ճ՛հ, ճ՛հ, ճ՛հ, ճ՛հ...

Խսային զարմանում է:

ԽԱՄՓԵՐԻ

Գէնացվալոս քիդ իմ զլուխը, էտէնց լաւ ախչիկ ու էտ զաղամի փուրդ:

ԳէՈՐԳ

Ե՞ն, փողն ինչ յիշերու է, դէղիդա, աղջիկ եմ ասում, որ քաղաքումը հատը չկայ:

Խսային փառք է տալս Աստուծուն:

ԽԱՄՓԵՐԻ

Բաս հիմի էրկու հարըրէն պակաս շիմ անի:

ԻՍԱՅԻ

Տաս-տաս թումանուց իս ուղում, թէ հինդ-հինդ թումանուց էլ փուր ըլի հաջաթ չէ:

ԽԱՄՓԵՐԻ

Երնէկ զիղենամ, Խսայի, դուն ինչ բան ունիս. մօցիքուլլ դժնն շըլիս:

ԻՍԱՅԻ, վեր թոշելով:

Մօցիքուլ էլ իս ու շիս էլ զիդի:

ՔԵԹԵԿԱՆ, մօտենալով Խամփերուն:

Սու, քա, ինչ էլաւ քիդ. խօ ամսւթու զեղինը մտայ:

ԻՍԱՅԻ, առանձին եւ կիսաձայն:

ԱՌԱԿԱՄ:

ԳէՈՐԳ, մօտենալով Խսայուն:

Խսայի, Խսայի: (Գառնալով դէպի Խամփերին:) Գէղիթեկանը:

դա, ինչ եղաւ քեզ. Ասառած վկայ, ինձ զուր չէ գալիս քո արարմունքը. զուքան բազար խօ չէ մեր տունը, մի փոքր քաղաքավարութիւն ունեցիր, է:

Խային նստում է իր տեղը:

ՔԵԹԵՒԱՆ, առանձին:

ԵՐԻԵԿ չէի կահշի:

ԽԱՄՓԵՐԻ

Վիս էկաղպէրա. բառ կու թռղնիմ վուր սա նշնէ քէ՛զ: Մէ ասէք հալա ովէ է, ում ախչիկն իս ուզում, իմ ճամփէն ես կու զթնիմ:

Անցում է քեթեւանի աջ կողմը:

ՔԵԹԵՒԱՆ

Ախար, օխնած հոքի, մէ անդճիտ էլ հիբթ չիս տալի վուր մարթ իմքին ասէ ու, ով ինչ անէ, համան լիզուտ իս բանեցնում: Էս զազա էլ խօսիլ կուլի՛. մէ խջալաթ քաշէ, է:

ԽՍԱՅԻ, առանձին:

Քամու ջազաց է, էլի, անիծածը:

ԽԱՄՓԵՐԻ, տախտի մօտ:

Ահա, բերնիս կոխալէք իմ դնում: (Զեռքով իր բերանը ծածկում է:) Արա, ովէ է, ասէք:

Նորից բերանը ծածկում է:

ԽՍԱՅԻ, վեր կենալով:

Տօ՛, էլ ի՞նչ նուր չար, նուր բարի. ուշացանք, Դիօրդի, Աստուծ զիզենայ, զնա չուստ շուրդ հացի, է:

ԳԵՈՐԳ

Էս սահաթիս, Խայի ջան: (Խամփերուն:) Դէղի-

դա, մէկ ինձ ասա, Գարասիմ եակուլիչ Զամբախովի աղջկան կը ճանաչեա:

Այս ժամանակ քեթեւանից զտնվում է Խայու և գէորգի մէջտեղը, իսկ սրանից աջ՝ Խամփերին:

ԽԱՄՓԵՐԻ, արհամարհանքով:

Նրան իս ուզում:

Ամենքը շուարվում են:

ԳԵՈՐԳ, վախեցած:

Ճինց նորան, ի՞նչ է: ԽԱՄՓԵՐԻ

Իժում, նրան իր ասում թէ սիրուն է:

ԳԵՈՐԳ

Ի՞նչ է, սիրուն չէ:

Խային, Գէորգից եւ քեթեւանից ծածուկ, նշաններով խնդրում է Խամփերուն լրել, խոստանալով նրան վողի մնա զումարներ, բայց Խամփերին չէ անսում:

ԽԱՄՓԵՐԻ, շարունակելով:

Նրա սիրունութիւնը առչի իմանալս է:

ՔԵԹԵՒԱՆ

Վայ, քուանամ նս, զնւրթ իս ասում:

ԳԵՈՐԳ

Ի՞նչ ես ասում, զէզիկա, իմ աչքով եմ տեսել:

ԽՍԱՅԻ, Գէորգին, ցածր:

Աստուծ զիզենայ, խափում է:

ԽԱՄՓԵՐԻ

Կուլի ուրիշ օմքին ին շանց տվի, թէ չէ Զամբախովինց կա... (Խային կրկնում է միեւնոյն նշանները, բայց ինց կա...)

Խամփերին ճասկանում է:) ... բապիտի ախչկան սիրուն շին ասում:

ՔԵԹԵԿԱՆ

Լիզուտ պլապանձվի, հըմ. հէնց դիդէի դուն ինքտ իս տեսի, կինազամ սիրոս գնաց:

Անցնում է խամփերու աջ կողմը և տախտի վրայ նստում:

ԳԵՈՐԴ

Ուրեմն դու ինքդ չես տեսել:

ԽԱՄՓԵՐԻ

2է, վուրթի, էնէնց իմացիլ իմ:

Խորհրդաւոր հայեացը է զցում Խայու վրայ:

ԳԵՈՐԴ, նկատելով խամփերու խաղը, սաստիկ շփոթվում է:

Ալդ ինչ է նշանակում... Օհ, Աստուած:

Բարկացած նեռանում է:

ԽՍՅՑԻ

Վուր չիս տեսի, բաս ինչի՞ր իս դուս տալի. անմթի իմ քի մօդ:

ՔԵԹԵԿԱՆ

Անմիդ խիզճ էրէխիս սիրուն էլ խալար իս անում. հոքուտ ինչ իս ասում, էտէնց աշքարա սուտ կուլի, թավափիան:

ԳԵՈՐԴ, բեմի խորրից, բարկացած:

Զեր մտկումն է սուտ:

ՔԵԹԵԿԱՆ, խամփերուն:

Քու ամկն էլ:

ԽԱՄՓԵՐԻ

Ես ինչ անիմ, քա. ինչոր իմացիլ իմ, էն իմ ասում. կուլի զուրթ խիստ սիրուն էլ է, ՚ես ինչ

զիղիմ: Էստի մնւլափ տվէք, զնամ դրուստ խալար բերիմ:

Գնում է զաթիբան վերցնելու:

ԽՍՅՑԻ

Այ, ուզում է զնա իր քրթամը վիր խփի. արա դրա խօսկն աւտալու է:

ԳԵՈՐԴ

Այսուհետեւ քեզ էլ չեմ հաւատում, Խայի, հաւատիցս հանեցիք բոլորովին:

Ճփոթուած ման է զալիս:

ԽՍՅՑԻ

Վա...

ԽԱՄՓԵՐԻ, զաթիբան ձեռքին:

Գնում իմ, այ:

ԽՍՅՑԻ, առանձին եւ կիսանայն:

Այ, ջառը զնաս ու ջնանդամը, հը:

ՔԵԹԵԿԱՆ, վեր թռչելով:

Քու զնան խկի էլ հարկավուր չէ. (Խելով խամթի մեռքից զաթիբանն) իր ամկով տեսիլ էլ է ու էլի կու տեսնէ: (Գեորգին) Գնա, վուրթի, էլ մի ու շանա, շնորդ հաքի:

ԳԵՈՐԴ, ներացած:

Թէ ինձ կը սիրես, գեղի, ձեռք վերցրու ինձնից. էլ ես նշ մէկ տեղ չեմ գնում:

ՔԵԹԵԿԱՆ, զաթիբան ձեռքին:

Վնչ քուանամ ու կուրանամ ՚ես: (Խամփերուն) Այ, կինծիտ կոտրվիլ էր վուր չէիր էկի, հըմ:

Զաթիբան զցում է աթոռի վրայ:

ԻՍԱՅԻ, առանձին եւ կիսամայն:
Պիտի էտէնց էր էլի, վուր լաւ էր էլի:
Քեթեհան, շարունակելով:
Էրնէկ գիղենամ հայհարս ուր էլի կանչում քիզ,
խօմ գիղէի քու ափալը: (Գէորգին:) Ի՞նչ իս անում.
Վուրթի, գնա շուրդ հաքի, գիշացվալօս դէղին:
Այստեղից սկսած ամեն անգամ, երբ Գէորգը բար-
կացած ման զալիս երեսը սպասի կողմն է ա-
նում եւ քեթեւանը նրա հետ խօսում է, ևամ-
փերին եւ խային թեմի աջ կողմում ծածուկ
վիճում են իրար հետ. իսկ հեց որ Գէորգը եւ
քեթեւանը երեսը դարձնում են նրանց կողմը,
նրանը իսկոյն կտրում են իրանց վէճը:

ԳԷՈՐԳ

Զեմ զնում, չէ, դէղի:
ՔԵԹԵՒԱՆ

Արա էտ ինչ արարմունք է, վուրթի, բարէմց վի-
կալ ու սաղ-սաղ գերեզմանը դի ինձ:
Գէորգ, նեղացած:

Այս, Տէր Աստուած:

ՔԵԹԵՒԱՆ

Քիմէն չիմ արմընժում, վուրթի, վուրքարավշուտա
խամփերու խօսկերուն անզան իս զնում. չիս տես-
նում վուր սա իր վուրքացաւանքն ունէ: (Խամփերին
ցոյց տալով վճռաբար իր աջու հինգ մատը խայուն, հե-
ռանում է նրանից:) Աստուած տայ, վուրս գայ էս բա-
նը, զուն իրան տու ինչ ուզում է. վարսալամ, վար-
քալամ, ահա:

ԽԱՄՓԵՐԻ

Գրա բախչիշը քըթմումն մուլ իմ խասնում. զրա-
մէն առնիմ ու նրանք իրանց ախչիկը մնաքթ ստ-
ղացնին:

ՔԵԹԵՒԱՆ

Այ, ձենդ կարէ Հախմիան Տէրը, հըա:

Ամին: ԳէՈՐԳ, բարկացած:

Գերջապէս համը տանում ես, դէղիկա:

ԻՍԱՅԻ, առանձին:

Այ, օղորմի քու հօըը:

ԽԱՄՓԵՐԻ, կիսամայն:

Մաիկ էս բէհայուն:

ՔԵԹԵՒԱՆ, մօտենալով Գէորգին:

Արի, արի, գիշացվալօս դէղին: Ախար էն սպա-
տուական մարթու խօսկիթը միտպ չէ: Գնա, քու
աճկով տիս զուրթն ու սուտը. թէ չիս հանի, ձե-
ռը մի է բոնում, թամասոքով խօմ չիս կապիի:

ԳէՈՐԳ, փոքր լութինից յետոյ:

Այն, այն, ես նորան խօստացայ գնալ և պէտք է
կատարեմ խօսքո:

Վուրս է զնում աջ զոնից:

ՏԵՍԻԼ ՃԱ

ՔԵԹԵՒԱՆ, ԽԱՄՓԵՐԻ, ԽՍԱՅԻ

ՔԵԹԵՒԱՆ, ԽԱՄՓԵՐՈՒՆ:

Խնդիր՝ քու զլուխը՝. Էտ զաղա էլ փուղի թամահութեն: Էն աղչկայ աէրիբը վուր իմանան, թէ քի պէս քուր իմ ունեցի, էլ էրեսներուս չին պիտի մարկ անի, հայս Աստծու:

ԽԱՄՓԵՐԻ, արհամարհանքով:

ՎԱԿ նրանց պէշծին:

ՔԵԹԵՒԱՆ, ԽԱՄՓԵՐՈՒՆ:

Լիզուտ չորնայ ու պրծնի, ահըա:

ԽՍԱՅԻ, առանձին եւ կիսանայն,

Ուր է, հը:

ՔԵԹԵՒԱՆ

էլ նուր մէկէլանց չխառնշտողիս, Խամփերի, թէ չէ, Աստուձ զիզենայ, իրնի մահի կու կտրվինք մէկմէկմէն: (Խսարուն:) Խսայի ջան, մէ քիչ էլ մնալափ առւ, գէթաղվա. յօրէս շուրը կու հաքցնիմ ու տար, պէնացվալէ:

ԽՍԱՅԻ

Էստի իմ, էստի, դէղի:

ՔԵԹԵՒԱՆ, ԽԱՄՓԵՐՈՒՆ չանչ անելով:

Լաւ տարի քի զայ, լաւ իմքին դուն իս զառի: Դուրս է գնում աշ դոնից:

ՏԵՍԻԼ ՃԲ

ԽԱՄՓԵՐԻ, ԽՍԱՅԻ

ԽՍԱՅԻ

Ախար, օխնած հոքի, ինչ իս տառմ. խուն թուման էլ քըթամ կուլի:

ԽԱՄՓԵՐԻ ինչի. թէ կի ուրիշնիբը հարուրնիր էլ կու վիկանին, ինձ խունը հաւամ է:

ԽՍԱՅԻ

Ի՞նչ իս չինի, ախար, վաւր մէրաշ խուն թուման իս ուզում. մէ տաս թուման ըլի, քսան թուման ըլի, էլի հա, թէ չէ էտ զաղամի բան կուլի՝ դմն իս ուզում: Յաս ինձ ինչ պիտի ննզնի, էրէզվան դէսը մահվան քըանքումը քառսուն ջէր անց ու դարց իմ արի: Մէ քիչ էլ Աստուձ ունեցի, օխնած հոքի, է:

ԽԱՄՓԵՐԻ

Քու բանը զոն զիզիս, Խսայի, իմ բանը՝ ես: Յաց տախմ ու վուշ ամանչիմ, վուր թէ էս սահաթիս չիս բերի ու չիս ավի, զիփ տակն ու վրէն կ'օնիմ, Աստուածածինը զիզենայ: Աչքարա էրեռմ է վուր ուրիշ օմքին է տեսի. բաս չէ ու՝ Զամբախինց կուրաճին կուլէր:

ԽՍԱՅԻ, շփոթուած, երեսը խաչ է հանում եւ առանձին: Միզայ Քիզ, Տէր Աստուձ, մակումս ինչիր է զալի:

ԽԱՄՓԵՐԻ

2իս գնում:

ԻՍՍՅԻ

Սխար, յօրէս զուս զու քայ էն տղին. տանիմ, էնդի
կ'օսիմ Գալասիմ եակուլիշին, կ'օսիմ խոստացայ:

ԽԱՄՓԵԲԻ, նայելով աջ կողմի դռանը:

Քու արկուը զուր է զուտն էլ չիմ փոխիլ տա,
ինչըու չիս բերի:

ԻՍՍՅԻ

Քու կնիկարմատ ասողին էլ ինչ ասիմ. զնամ
բերիմ, աճկղ գի, հը... էն տղին էլա մայինց սրտա-
վուրէ ինչըու իմ զալլ:

ԽԱՄՓԵԲԻ, կրկին նայելով նոյն դռան կողմբ:
Էտուրը նս զիղիմ: Դուն զնա, շնւսա արա... Ազա,
հըա. մնում իմ քիզ էստի... Գիղենառ՝ տանէն վուտը
չիմ զուս զնիլ տա, ինչըու չբերիս:

ԻՍՍՅԻ, զնալով, աղաղակում է:
Այ, յայ, յայ, յայ, յայ, յայ...
Քուրս է զնում զիմացի դռնից:

ՏԵՍԻԼ ՃԳ

ԽԱՄՓԵԲԻ, մնակ:

Էտէնց, այ. աճկիրս ուռիլ է Զամբախինց բա-
կուրի համա. նրա պտուղն էլ կարիմ. նս իմ թիքէն
լաւ աշիմ զիփունանց վրայ: Ամա իմ քվիր տղէն
խօմ չէ զժվի... Կու'լի զնւրթ Մարքրիտին ըլի տեսի
ու հաւնի... Թանին փուղ ու բաժինքն աճկիրը
կապիլ է: Դճրթ, էն զաղա փուղ ու բաժինք կու'լի...
ում աճկիրն արլանդվա չի անի. նս էլ վուր ըլիմ,

զու'զիմ ու... Ամա թէ կի ինքը հաւնում է ու ուզում
է, նս ինչ իմ հոքում, զարգերուս զլուխն է. մինք
էլ կու լիլվանիք:

ՏԵՍԻԼ ՃԳ

ԽԱՄՓԵԲԻ, ԳԵՌՐԳ.

ԳԵՌՐԳ, դուրս է զալիս աջ դռնից ֆրակով, սպիտակ փող-
պատով, ձևորին սիլինդր եւ սպիտակ ձեռնոցներ: Գառ-
նալով զէսի կուլմար:

Լան է, լան, գէղի, դու զնա: (Խամփերուն:) Գէղին
կանչում է: (Ազ ու ձախ նայելով:) Խային ինչ եղաւ:
ԽԱՄՓԵԲԻ

Յօրէս զու քայ... Գէնացվալոս Խամփերին, ինձ
վրայ ուր իս նիղանում. ախար հիմի էլ վուր չմէր-
վիմ, էլ նիփուցութին:

ԳԵՌՐԳ, շփոթվում է, յետոյ զիսարկը դնելով սեղանի
վրայ եւ ձեռնոցները հաղնելով:

Գէղիղա, ասա զրուտա՝ այն աղջկան ճանաշնում
ես թէ չէ:

ԽԱՄՓԵԲԻ, կակաղերով:

Չէ... վուրթի... չիմ տեսի. (Հաստատագէս:) ամա
լաւ աղչիկ ին գովում, հախ Աստծու, ու էլախտ էն-
կուր փանեցի, վուր իմ թիքէն չկորչի: Տիս վուր
ուստութենով ժաժ էկայ. զնաց վաղիվադ քու պա-
րուն հային ու զէմուգէմը կ'օսէ քու անիբուչը, վուր
նս էլ զէղիղա կամ աշխաքումն ու ինձ էլ յարդ ու
պատիւ է հարկաւուր:

ԳԵՂԻԳ

Ի՞նչ իս ասում... 0'հ, անհաստուածներ... զուք ինձ
բարեկամութիւն անելու էք եկել, թէ երեսս սեա-
ցնելու: (Առանձին:) Անիծուէք գուք, անիծուէք. ձեզ
հետ խօսեն անդամ անպատճութիւն է:

Բարեկացած նստում է:

ԽԱՄՓԵՐԻ

Էստու համա զուն ուր իս նիդանում. աղաթ է,
վուրթի: Դուն քու բանը կայիմ բռնէ. հաւնիս՝ մողէ,
շհաւնիս՝ խէիլաթ շիմ տեսնի. ամա մամն ուղիս, գի-
դացի վուր ՚ես էլ իմ փային գ'ուղիմ... (Աջ կուլի-
սից քեթեւանը կանչում է՝ Խամմիերի, Խամմիերի:) Գա-
լիս իմ, գալիս: (Գէորգին:) Զարդ տանիմ, մի նիդա-
նա, ասկի ուուրար Գիօրգի ջան: (Չեռքը Գէորգի ուսի
վրայ դնելով:) Դուն ջել նշնիի, վուրթի, զօղն էդի
գամն է. հարսնըքումդ խախլով ջուր կու բերիմ, քու
արիւր, դիփունի վրայ շատ բանը ՚ես կու շինիմ,
շուշպար ու լէզզեվար էլ կու խաղամ, թէ գ'ուղիս:
Հէնց գիդիս շիմ կանա, ինչ անիմ թէ իսուն տարե-
կան աւել իմ. այ՝ (Նիծաղելի ձեւով պար գալով:)

Զիֆ թը պի տօմ, ջիֆ թը տի տու,

Զիֆ թը պի տօմ, ջիֆ թը տի տու.

Դը՛նդ, դը՛նդ, ջիֆ թը պի տու,

Դը՛նդ տը պը տըմ, ջիֆ թը տի տու:

Դուն միր աղաթն ու սովորութինը խսկի էլ այնումդ
մի գցի, վուրթի: (Գրկելով Գէորգին, զուկաը համբու-
րում է.) Զարդ տանիմ, Գիօրգի ջան, ասկի ուու-
քար Գիօրգի ջան:

Գուրս է վաղում աշ դռնից:

ՏԵՍԻԼ ԺԵ

ԳէՈՐԳ, մենակ. երկար լուռթիւնից յևոյ եւ տեղից վեր
թոչելով:

Այ, Աստուած անիծէ ձեր այդ աղաթն էլ ու սո-
վորութիւնն էլ... Սյա ինչ խայտառակութիւն է. ինչ
կարծիք պէտք է տանի այժմ այն մարդը մեզ վրայ:
0'հ, ամօթ, հաղար ամօթ... 2է, այս բոլորը սովորա-
կանից զուրս բաներ են և այստեղ անպատճառ մէկ
զաղանիք կայ, որ աշխատում են ինձնից ծածկել...
Ի՞նչ պիտի լինի. ինչպէս իմանամ... Կարելի է ճշմա-
րիս իմ տեսածը աղջիկը ուրիշ լինի և ինձ խարելիս
լինին. ինչ կայ այստեղ զարմանալու: Եմ մօրաքրոջ
այն հայեացըը, որ նա ձգեց խայու վրայ, նորա փո-
փոխական խօսքերը, նորա կակազելը, վերջապէս
իրան նսայու դնալը առանց ինձ սպասելու, բաւա-
կանին հաստատում են իմ կարծիքը... Այն, այն, այլ
ես կասկած շկայ, ինձ կամենում են խարել, ինչպէս
շատերին են խարել... 0'հ, Տէր իմ, այս ինչ մարդիկ
են, այս ինչ երկիր է մեր երկիրը. ամեն մի քայլա-
փոխում ստութիւն, խարէութիւն, սուտ բարեկամ,
սուտ աղգական, մէկ չնշին օգտի համար պատրաստ՝
ամենամօտ մարդուն անդամ զոհել, նորա անունն
ու պատիւը խայտառակել... 2է, ես այդպէս շուտ
շիմ խարուիլ. մինչեւ ստոյդը շիմանամ թէ ինչումն
է բանը, ոտս անդամ շիմ զնիլ Զամբալովի տանը:
Գլխարկը ծածկելով զուրս է զնում զիմացի դռնից:

ՏԵՍԻԼ ԺԶ

ԽԱԹԱԲԻ, մենակ, զուրս վաղելով աջ դռնից:

Մաիկ, մաիկ էս թավափիանին... Դիօրպի, Դիօրպի... քա, Դիօրպի... (Նախաստնեակից, ձայնը բարձրացնելով;) Դիօրպի, Դիօրպի ջան, մւր իս զնում. քա, չիս իմանմեմ, քիզ իմ ասում... Դիօրպի ջան... (Յետ դառնալով;) Դուն շմեսնիս, յիզ էլ շմափի արաւ... (Ուռաջ դառնալով;) Գնաց, վաշխաւ, կորաւ փողիըս, մնացի դառ ու դարդակ... (Ընկնելով տախտի վրայ և երկու ձեռով խփելով ծնկներին:) Վայ քիզ, վայ քիզ, իմ իսուն թուման... (Յանկարծ վեր թոչելով տեղից;) 2Է, էտէնց չէ վուր զուք զիդիք... Բաս ՚ես կնիկ շիմ ըլի ու (բառնելով շիքիլան:) էս չիքիլէն զիխիս շիքիլա չի ըլի, թէ ձիր օխտէմէն չէկայ ՚ես:

Շտապով վերցնում է դամիրան և զուրս վազում
դիմացի դռնից. վարագոյն իշնում է:

ԱՐԱՐՈՒՀԱԺ ԵՐՐՈՌՑ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ
Ե պատուի առ
Կարապետի տան տառչին արաբուածի սինեակը: Ժամացոցի
սլաքները ցոյց են տալիս ժամը վեցը

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍԱՐԳԻՍ, մենակ, աթոները սրբում է:

Զիւ մէ բաց չէլաւ Մարքրիտի բախտը... էրանի
զիկենամ թէ ուզովն ովէ... չնզու մաթա կու տա-
նէ, ձիք ապիւը, հը... Ամա ի՞նչ. հէստի հանգը դու-
քիլ ի՞ն ու զարթըրիլ, վուր հրիշտակ կու էրեայ
զրուտ. էնէնց պէտած աղչկան ով չի համնի... ի՞նչ
արին, տօ, տւտաս կէս լիզրն աւել սիպտըկագիդ
ըլին բանեցրի, բօյին էլ մէ թիզը մէրաշ ի՞ն ուզում
աւելցնի լոթիքը. զառաւ վուր շիմշատ է ու շիմշատ,
էլի... Փուղն ի՞նչ հանգի բան է, ՚ես նըա մօզօնսղի
հոքուն մեռնիմ. մէ ջուխտ բաթինկէն մէտի կէս
օրումը կարիլ տվին: Ամա ի՞նչ կըլնդնիր ունէ... պայ,

պայ, պայ, պայ... 'ես դաւի շունիմ, ախպէք:
էն շաթոքէներու լավչըքնիրը տնսիլ ի՞ք. էրկու էն
էն զաղա կը ընդնիր իմ ասում, արիվա վկայ... Վայ,
ձիր տունն Աստուծ շինէ, էս ինչ ՚երդիր է մեր քա-
ղաքը: Ասինք էսօր խափեցին, էքուց խօմ կու էրեայ.
իժում գնաք թամաշա արէք նրանց տուր ու զմիու-
ցին: է՛հ, Աստուծ վիրշը բարի անէ, լու ախչիկ է
Մարքրիաը, 'ես ու իմ հոքին. էս զաղա տարի է
էսաի զուլուզ իմ անում, մէ օր նրամէն վիս խօսկ
չիմ իմացի: Հիմի ինչ անինք վուր էքուց էրեսը կու
լուանայ ու էլի էն Մարքրիաը կու'լի. սիրունութինն
ու զդութինը Աստծու միզ է:

ՏԵՍԻԼ Բ

ՍԱՐԳԻՍ, ԿՈՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ, դուրս զալով աչ դոնից:

Տօ, շրերին էնդունք:

ՍԱՐԳԻՍ

Էս սահաթիս էւէտ ինքն ուստին կու բերէ, աղա.
Ճեռին ունէր, մէ էրկու ասդի ծէր էլի պակաս է, կ'օսէ:

ԿԱՐԱՊԵՏ

Տօ, թէ ասի վուր զլիսին կանդնի ու չնոստ վրա-
հասցրու:

ՍԱՐԳԻՍ

Էս նմուտիս կու բերէ, աղա ջան, հէնց րանէ
հագիր էր, իմ աճկով տեսայ. 'ես էլ էստի աշխրքի
բան ունիմ, ախար:

ԿԱՐԱՊԵՏ

Լաւ, թէ ուշանայ, էլի զնա, հէնց ապրիս, ու
չնոստ վաղեցրու...

ՍԱՐԳԻՍ

Բաշ ուսթա, աղա ջան:

ԿԱՐԱՊԵՏ

Էստի դիվ պրծար:

ՍԱՐԳԻՍ

Հրամանք իս, աղա, մենակ զօնաղի օթախն է
մնացի ու սանդուխաը:

ԿԱՐԱՊԵՏ

Լաւ բարաթ կանքի րի. գէս ու գէն ծաղկնիը
կու զարսիս, վունցը ասիլ իմ. մումիրը դիվ մէտի
վառէ, պաղիէզգի դոան առչիվն էլ քնչէն աւիէ,
վուր իստակ ըլի...

ՍԱՐԳԻՍ

Հէստիկ շինիմ, աղա ջան, վուր հալիւայ:
Գուրս է զնում զիմացի դոնից:

ՏԵՍԻԼ Գ

ԿՈՐԱՊԵՏ, մենակ, սկզբումը նստած է:

Բանս լաւ է զնում. ամեն կոնէմէն հօնդրնիրը
ձքած է. փէիքը արլարուզի պէս զամբո զործած
է... Գու քայ հիմի պարուն վեսացուս, ճանջի նման
թղղալով՝ թը՝ ըրխկ, (Ճեռիը ճեռին է խփում:) զամ-
բումս գէվէր կու ննզնի: Ճատ իժում բղ-զղ-զղ
կ'օնէ, ամա էլ իմ շանդերէմէն օչով շի կանա զնա...

2է, հիմի մէկն ու մէկը վուր ասում ինձ թէ փէիքարն, ասում է, զարշելի անասուն է: Ինչի՞, մէ ձիգիմ հարցնում. շան պէս մարթիք է կարտում, թէ զիլի պէս ու ասլընի պէս մարթիք է կուլ տալի. ինչով է նա փիս. ինչ սատուձ չնուք է տվի, էն շնուքով է ապրում... Ախար, զազմնի պէս ակռէք շոնէ վուր կծելով իր կերակուրը ճարէ, թռչունքի պէս թիւիր չունէ վուր իր թռչելով ապրի. բաս ինչ անէ խիղճը, վուր օժախի քնջներքումը արլարուդէք չսարքէ ու ճանջիրն էնդով շրոնէ... Հիմի չիք ուզի վուր վուներով ման գայ ու էնէնց իր կերակուրը ճարէ. զանա չիմ գիզի, էն սհաթին կու թողնիք, հըա... (1ուռ մտածում է:) Պարթ, շատ վուր փիքի իմ անում, է, էս աշխարքը զիփ մէկոմէկու ուաելու է ստիղծած: Երեխայ վուխաս լսում էի, թէ՝ «Ժանզմա թօփի, թօփման զէլի, զէլմա թխա, թխամ վէնախի շէճամա: »*) Էստոնիք ՚ես հէնց զիզէի զիփ տուասոց մարթկերանց տասծ բանիք է, ամա հիմի վուր լաւ հէսար իմ անում, զուրթ վուր զիփ մէկոմէկու ուտում ին. մէ թռչունք մէկին է ուտում, մէ անասուն մէկէլին, մարթու աճկը խօմ դարթնի խուզը ինչը կու կշտացնէ. ինչ բարաթ-բարաթ անասուն ասիս, թըս-շունք ասիս, միք վուրն է դէվէր զնում. էն կինք-մէն վուր շըլինք վախենում, է, մէկ-մէկու էլ կուտինք: Ամա միթամ շինք ուտում, այ. էս աշխըրքումը ովոր ումն ախտում է, նա է դօչաղը. ախտին ու

*) Վրացերեն է: — Ժանզը հրացանին, հրացանը դալին, զայլը այծին, այծը այզին կերաւ:

ուտակիլը մէկ է, էլի... Ամա միք հիրթն էլ զալիս է. խուզն է անուշ անում միզ, դառնում ինք՝ խուզ: «Հուզ էիր, ասում է, ՚ե հուզ զարցի,» կ'օսէ: (1ուռ զուխը շարժում է:) Ե՞ն, վուչ աշխարքը... Ամա ինչի վրայ միսս էկաւ էստոնք... հա, փէկքիք վրայ. չէ, փէկքիք վրայ կի չէ, իմ արարմունքի վրայ: Հիմի միթամ ՚ես խափիփայ իմ. ումն ինչ գէթ իմ անում, ախպէք. թռչ ինձ օչով չխափէ, ՚ես էլ օչովու չխմ խափի... Հիմի էսէնց վուր շժամ գամ, գմւք իք ուզում իմ ախչըկմն. զանա շիմ զիզի, աւտաս գոնիրս կոտրախիք: (Ծոցի ժամացոյցը հանելով:) Զեր սհաթի վիցն է. ինչ ուշ է մժնանում, ախպէք... Յօրէս հսային ու վեսացուս պիտի զան. հէսաի հանզն ընթունիմ վուր է՝ աճկիրն արլանդվա անիմ իմ պարուն վիսացուին: Զեր հալա մօհրաթ կ'օնիմ... էն... իժում հէսաի բաներու վրայ կու խօսիմ հիզը, վուր սուրփ համարէ ինձ... իժում... իժում էլ ինչ, զուս կու բերիմ իմ կարտինկա Մարքրիտին ու տեսնիմ թէ էս քու պարուն Գէվուրք Մասիսհանցը ինչ կ'օսէ... ինչ պիտի ասիր... (Ուսերը վեր է բաշում:) կու ամանչի ու նշանը կու տալ տամ, էլի..., Ամա վայ թէ էն մէկի հանզը գլակը վիկանէ ու ասէ՝ մնաք բարով: Վանց կանայ, ՚ես էն մարթն իմ. Աստուձ է վկայ, էսաի էւէտ վլուխը կէս կ'օնիմ: իմ խափիլը հիշտ բան շգիդենաք, հըմ. ինձ Դարասիմ եակուլիշ Զամբախով կ'օսին:

Դուքս է զնում աշ զոնից:

ՏԵՍԻԼ Դ

ՄՈՐԳԻՑ, մնանակ, մտնում է ձախ գոնից երեսը զեղեցկացրած եւ Նատալիային նմանեցրած, դէրիայի փեշերը այնքան երկար է, որ խանգարում է ման դալ: Նստում է եւ մի փոքր ժամանակ լուր մնում:

Սիրտս հէնց զիղիմ քամզում է... էսէնց շտապով բան չիմ տեսի, էս հանգի ախչկայ նշնիլ էլ չիմ իմացի... Ասում ին լաւ տղայ է, ամա խիլքս չէ կըտրում. լաւը վուր ըլի, ասանց տնդղիլ ախչիկ գ'ուղէ օմքի՛ն: Հալրաթ փուղի խաթիր է ուզում ինձ... Վայ իմ միխկը. փուղիրս կու խժուէ ու իժում քօծի պէս վէր կու զցէ ինձ: Ամա կուլի ինձ տնդղելու է զալի ու ինձմէն թաքցնում ին... Ե'տ է, միթամ փողոցի ապրանք իմ, միթամ չիթ է առնում. հաւնի՝ ուզէ, չըհաւնի՝ դուս դնայ: (Տեղից վեր է կինում:) Ա'ս, Աստուձ, ինչ էիր հոքում, ինձ էլ ուրիշներու պէս սիրուն էիր սախղծի. Թաղ սիրտս քար էր էլի, լաւն ու վաղը մէկ էր էլի ինձ համա աշխրքումն ու էրեսս սիրուն. զինջ կու ապրէի, աւատացած կուլէի վուր իմ մարթու սիրեկան իմ: (Գնում է գէպի հայելին և մէջը նայում:) Էս իստակ իմ նման չիմ... (Հայելից հեռանում է եւ այնպէս նայում մէջը:) Երանի զիփի էսէնց ըլիմ, էլ իմ մարթու սիրաը չի հովնայ ինձմէն: Ամա ովոր վուր է էն տղէն հայրաթ մենակ փուղի համա չէ ուզում ինձ, թէ չէ էսէնց ուր ին սիրունացնում ինձ նրա աճկումը... Ա'ս, Աստուձ, թաք նա ինձ

սիրէ, խօմ զիղիս դիփի Քու կամքի կատարող իմ էլի, ու յօրէսի դէնը իմ զլուխը չարի փուլս կ'օնիմ բարերարութենի համա... (Նայում է ժամացոյցին:) Սհաթի վիցն է, յօրէս պիտի գալ, ասում ին. ինչըու նրա զալը՝ իմն ինձ կու համնի... Ա'ս, Աստուձ, Երանի ինձ չէիր սախղծի, Երանի ախկափի վուրթի էի էլի ու մէ ախկափի մօդ բախտաւոր էի էլի. ով զիղէ՝ ինչ պիտի գայ զլիսիս:

Թաշկինակով աչքերը սրբում է եւ նատելով բազմոցի վրայ լուր լաց է լինում:

ՏԵՍԻԼ Ե

ՄՈՐԳԻՑ, ՆԱՏՈՒԼԻՑ.

ՆԱՏՈՒԼԻՑ, մտնում է ձախ գոնից, ծեռքին թղթէ կապոց: Հըա, Մարքրիտ ջան, բաթինկէքդ բերին... Քա, ինչ իս անում, լաց իս ըլում. խօ էրէսիտ զիղը վէր դու քայ:

ՄԱՐԳԻՑ

Ես էլ էտ իմ վայ տալի իմ զլուխը, Նատալիա ջան: Առնում է Նատալիայից կապոց:

ՆԱՏՈՒԼԻՑ

Եհ, տուտուցացիլ իս, ինչ է. դուն հէնց զիղիս մինակ զնն իս լաց ըլում. ինձ էլ վուր նշնում էին, լիրթ ու լիղիս զիղիլը էկաւ լացէմէն:

ՄԱՐԳԻՑ, հոգոց հանելով:

Քու լացը իմ լացի մօդ ծիծաղ կուլէր, Նատալիա ջան: (Լուր բաց է անում կապոցը եւ հանելով միջից սար-

սափեմի երկայն կրունկներով կօշիկները, զարհուրած վեր է թռչում տեղից:) Էս ի՞նչ է, քա. էս դադա կը ընդնիր կուլի՛. վուտիս վրայ վմնաց կանգնիմ. Արէլը^{*)} խօս չէմ:

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ զիդիմ, դէժաղիա, քու մամէն է կարիլ տվի...
(Կօշիկները առնում է Մարգրիտի ձեռքից և առանձին:) Էս ի՞նչ ունցնաւուր իմքնիր է, քա: (Մարգրիտին:) Ինչոր վուր է, էսառնք է, Մարգրիտ ջան, չարա չկայ, պիտի եօլա տանիս: Բռնէ, հաքի, էլ մի ուշանա:
Կօշիկները տալիս է Մարգրիտին:

ՄԱՐԳՐԻՏ, վիրաւորուած:

Հիմի իմ իմանում էս զէրիի էրդէնութինը: Էտէնց պիտի, մօզա է, կ'օսէ... Խիղճ աղայ, ինչ հանգն ին ուզում խափի: (Տնդելով կօշիկները:) Մհոնի սրա կարողի արիւը:

Կօշիկները դէն է զցում:

ՆԱՏԱԼԻԱ

Վայ, քուանամ ՚ես, էտ ի՞նչ արիր, քա. մամէտ վուր իմանայ, ի՞նչ ջուզաբ կու տաս:

ՄԱՐԳՐԻՏ, ձեռքը ճակատին տանելով:

ԱՌԱ:

ԼՈՌԵԹԻՒՆ:

^{*)} Արէլը Թիֆլիզի հասարակաթեանը ծանօթ մի ճարպիկ անձն էր, որ հանդիսաւոր աօներին երեք—չորս ստմէնաշտի ձողերի վրայ կանգնած, իր ձեռնածութիւններով զուտրճացնում էր ժողովրդին և զարմանալի զիւրութեամբ ման էր դալիս այն ձողերով:

ՆԱՏԱԼԻԱ

Քա, լաւ է, մէ չուստ հաքի, է՛: (Գարձեալ լուսուն:) Քու խաթիր տաւն ու տիզս թողիլ իմ, զուն կի էտէնց իս ժաժ զալի հիզս:

ՄԱՐԳՐԻՏ, վաթանուելով Կատալիսյին:
Բախչէ, բախչէ, նատալիա ջան, ՚ես էլ չիմ զիզի՝ ի՞նչ իմ անում...

ՆԱՏԱԼԻԱ

Լաւ է, լաւ, Մարգրիտ ջան, զուն սիրազ լաւ պահէ... (Համբուրում է զլուխը:) Օզունով քու բանը լաւ զայ, ուրիշ վունչիշ չիմ ուղի ՚ես: (Վերցնում է կօշիկներն ու տալով Մարգրիտին:) Բռնէ, չնւստ արա:

ՄԱՐԳՐԻՏ, կօշիկները ձեռքին, զնալով:
ԱՌԱ, Աստուծ, սպանէ ինձ ու պրծի:
Գուրս է զնում ձախ զնից:

ՏԵՍԻԼ Զ

ՆԱՏԱԼԻԱ, մենակ:

Խիղճ ախչիկ, միխկս գալիս է... էն բաթինկէքն էլ ի՞նչ մօթիսրա է, քա... էն հանզի կը ընդնիր էլ չէի տեսի իմ օրումը... Հիմի վուր մօզա զայ. յայ թէ բօյի կու բռնին մէրաշ զիփունքը... Տէր Աստուծ, իմ զուշմնին էլ շտաս զիղճ ախչիկ: (Հայելի մէջ զննում է իրան երկար ժամանակ:) Ի՞նչ զրուստ է շանց տալի էս հալիլէն:

Շարունակում է նայել հայելի մէջ:

ՏԵՍԻԼԵ

ՆԱՏԱԼԻԱ, ՄԱՐԳԻՏ

ՄԱՐԳԻՏ, մտնում է ձախ դռնից բարձր հասակով:

ԷՐՆԵԼ քիզ, նատալիա:

ՆԱՏԱԼԻԱ

Քա, դրուստ իմ բօյի իս, Մարգրիտ ջան. մւմը
շիս դուր զա էտենց:

ՄԱՐԳԻՏ

ԷՇԻ, նատալիա ջան, մէ իմ սրտումն էլ զէվէր
մտիկ տնւ. մահս էրնէլ իմ տալի, Աստուծ գիղենայ:
Մամիմէն վախենում իմ, թէ չէ ուղում իմ ասի՞ վուր
ևս մարթ չիմ ուղում. թագ կսանանցը տայ ինձ:

ՆԱՏԱԼԻԱ

ԳԺՎԻԼ իս, Մարգրիտ, թէ ինչ է էլի քիզ:

ՄԱՐԳԻՏ

Իսկի՞ էլ չիմ զժվի. էն տղէն միխկս զալիս է...
Էրանի կանենամ, թաքուն իմաց կ'օնիմ վուր վունց
էրեսիս աւտայ, վանց բօյուս, թէ էնչախն էլ գ'ուզէ
ինձ ու կու տեսնիս. ամա վճնից ասիմ ես նրան էս
բանը, ամութու զեղինը կու մտնիմ:

ՆԱՏԱԼԻԱ, նատերով բազկառոսի գրայ:

Պնյ իմ ամկին. զանտ պիտի խօսիս էլ հիպը՝
քար-գուրձ անելու կու զառնաս խօմ: 'Երիք ամիս
նշնած էի, մէ չէր իմ ձէնը չէ իմացի իսային, քու
արիւը:

ՄԱՐԳԻՏ

Գիղիմ, նատալիա ջան, ու մամէն էլ սաստից
վուր ձէն ծովառն չհանիս էս զիշիր, կ'օսէ. ամա
լն աղէն մէ օր խօ կու իմանայ իմ ափալը. խօ կու
անմանէ վուր էրէսս էլ սուտ է էլի ու բօյիս էլ. էն-
շախն իստակ աճկէմէն կու զցէ ինձ:

ՆԱՏԱԼԻԱ

Գարդ մի անի, Մարգրիտ ջան, վունց աճկէմէն
կու զցէ ու շատ էլ կու սիրէ քիզ, 'Կփոր քու խա-
սիսիթը կու իմանայ:

ՄԱՐԳԻՏ

ԷՇԻ, նատալիա ջան, խասիսիթի համա վուր ու-
ղում ըլի, էսէնց տիկին էլ չէին շինի ինձ... էրանի
գիղենամ նա լինչ խասիսիթի տէր է:

ՆԱՏԱԼԻԱ

Աստուծ գիղենայ, Մարգրիտ ջան, իսայիս զովում
էր՝ թէ խիստ լաւ տղայ է, կ'օսէ, խասիսիթն էլ
լաւն ունէ ու ուսումն էլ, կ'օսէ. զարթնի էս համ
շէնէլ է ու համ սիրուն. ուրիշ լինչ իս ուղում, քա՞:

ՄԱՐԳԻՏ

Վայ իմ միխկը, վուր վունց սիրունութինով կա-
նամ զա հիպն ու վունց ուսումնով. չընէլ չէլ ըլի՝ մէ-
էրկու տարի թողիլ էին ինձ էն պէնսիօնումը... Դուն
շիս տեսի էն տղին, նատալիա:

ՆԱՏԱԼԻԱ

Իմ օրումը չիմ տեսի... Դուն խաթթամ կաց,
Մարգրիտ ջան. ասում իմ՝ վուր իսային խիստ էր
զովում, աւտան ինձ:

ՄԱՐԳՐԻՑ

Այս, սիրաս վիս է, նատալիա ջան. հէնց զիդիմ
խիխուելու պիտի տանին ինձ:

Թաշկինակով աչքերը սրբում է:

ՆԱՏԱԼԻԱ, կանգնելով Մարգրիտի առաջ և ձեռքը նրա
ուսին դնելով:

Հերիք է, թէ քու Աստուծ կու սիրիս, Մարգրիտ...
ՄԱՐԳՐԻՑ, զառնութեամբ:

'Ես ինչնվ իմ միզաւուր վուր զիդմ իմ:
ՆԱՏԱԼԻԱ, նստելով Մարգրիտի կողքին ձեռքը միշտ նրա
ուսին:

Ի՞ն, լաւ է՝ հէնց ապլիս... (Մարգրիտը յանկարծ
ընկնելով Նատալիայի զիրկը, հիեկելում է: Պատուիր:) Աբա
էտ ինչ աբարմունք է, Մարգրիտ, վնելու իս զթի.
Էլ բա զրօս լաց է հիմի:

ՄԱՐԳՐԻՑ, հեռացնում է զլուխը Նատալիայից և աչքերը
սրբում:

Այս, նատալիա, ինձ պէս բէրախատ ախչիկ չկայ:
ՆԱՏԱԼԻԱ

Լաւ է, մէ սիրադ յիդ բի, է՛. ինչ էլաւ քիզ, քա՛:
ՄԱՐԳՐԻՑ

Իմ սիրաը վաղ է կոտրած. Աստուծ ինձ վուր
ստիղծից, զիփունի համա ծիծաղ ու մասիարա
ստիղծից ինձ:

ՆԱՏԱԼԻԱ, վեր թոշելով տեղից:

Ի՞ն, ուցնառը իս, քա՛:
Գնում է զէպի աշ:

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ԽՍԱՅԻ

ԻՍԱՅԻ, մտնելով միջի դռնից, զիսարկը ձեռքին:

Ո՞ւր է Կարապիտը: (Տեսնելով Մարգրիտին) Օ՛հ, լաւ
իս զառի, Մարգրիտ ջան: (Մարգրիտը ոտի կանգնելով,
ողջունում է Խայտն, որ զարմացած մի քայլ յետ է
քաշվում. Նատալիան ծիծաղում է:) Վա՛, հէր օխնած,
մէրաշ վախեցայ. Էտ ի՞նչ հաղա բօյի իս բանի:

ՄԱՐԳՐԻՑ, վշտացած:

Ասում ին վուր մօղա է: (Ոռանձին և. կիսաձայն:)
Այս, Աստուծ:

ԻՍԱՅԻ

Էտ բացրութին էլ մօղա չէի իմացի. յօրէսի զինը
կտուրն էլ առանց սանդուխտ դիվիր կ'էհաք Աստծու
օղորմութենով: Մէ ասէք՝ մւր է Կարապիտն, է:

ՆԱՏԱԼԻԱ

2իմ զիդի, մնամ վուր տանն է:

ԻՍԱՅԻ

Խիստ հարկաւուր բան ունիմ, մէ տեսէք՝ վ՞ուր
օթափումն է. պիտի էս սհաթիս յիդ զնամ, ամսութ
է, էն տղէն մնում է, յօրէս զու քանք:

ՄԱՐԳՐԻՑ, առանձին:

Յօրէս սիրաս կ'էհայ:

Ծանր բայլով զուրս է զնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ թ.

ՆԱՏԱԼԻԱ, ԽՍԱՅԻ

ՆԱՏԱԼԻԱ

ԽՄՐԴԱ ալսչիկ, հարիեցաւ դրուստ:
ԻՍԱՅԻ

'Ես ու իմ հոքին, քու սիրունութինը նա պիտի
ունենայ, եւա նրա սիրտը դուն:
ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ է՝ փիս սիրտ ունիմ, 'Եփ կու հաւնիս, արա
'ես քիզ մեր ուղեցի, վուր էտունք իս ասում հիմի:
ԻՍԱՅԻ

Լաւ է, գլխէմէն մի կցի, քու հօրն օղորմի. փիսը
վուր ըլիս, խօմ իմ կնիկ չէիր ըլի:
ՆԱՏԱԼԻԱ

ՎՌԵՆԳ կու'լէր քու բանը:
ԻՍԱՅԻ

ՆԱՏԱԼԻԱ... էրէգ էստի զալիս խօմ քիզ օմքին
ջէհէլ տղայ շոմատ էկաւ:
ՆԱՏԱԼԻԱ, վախեցած:

2Է, ի՞նչ խաբար կայ:
ԻՍԱՅԻ, առանձին, երեսը խաչ է հանում:

Միզայ Քիզ, Աստուծ: (ՆԱՏԱԼԻԱՅԻՆ) Դրուստ իս
ասում:

ՆԱՏԱԼԻԱ

Քա, ի՞նչ շառիր իս մօզօնում գլխիս... (Թաշկի-
նակով աչքերը սրբում է:) Հիմի էտ է պակաս:

ԻՍԱՅԻ, առանձին:

Տօ, 'Կո էլ ի՞նչ ախմախն իմ. ի՞նչի՞ր իմ վիքք
անում: (Գրկելով հատալիային, կամննում է նրան համ-
բուրել:) Լաւ է, լաւ, բարիշինք, նատալիա ջան:

ՆԱՏԱԼԻԱ, աղաստեղով Խայու գրկից:

Քա, ի՞նչ իս անում, դ'ուզիս օմքին տեսնէ:

ԻՍԱՅԻ

Այ սարսադ. մվ պիտի տեսնի դարդակ օթախումը:
ՆԱՏԱԼԻԱ

Հարսնքութին անտիկ մօրէ կու մունիս ինձ համա:
ԻՍԱՅԻ, առանձին:

Իրան ավէք տասչուրս շային: (ՆԱՏԱԼԻԱՅԻՆ) Է՛յ,
Ջեր ջուրը շիս տեսի, մւզում իս բաշմլինիրդ հանի՛:
ՆԱՏԱԼԻԱ, ձեռքով Խայու բերանը ծածկում է:

Ի՞ն, զուն վուր անկարք խօսիլ գիղիս:
ԻՍԱՅԻ, հատալիայի ձեռքը բոնելով:

Ի՛ւֆ, սիպտայ բամբակ է:
ՆԱՏԱԼԻԱ

Բաս շիս առնի՛:

ԻՍԱՅԻ

Հ՛ը, էլի ուզում իս անզաճս կտրի՛:
ՆԱՏԱԼԻԱ, ձեռքը Խայու ուսին զնելով:

Հա, ի՞նչ է, Խայի ջան, գէնացվալէրի:
ԻՍԱՅԻ

Է՛յ, աօ, վից-օխաը թուման վուղ կ'օնէ, ի՞նչ իս
ասում. էտ դաղամին մէ ամսումն էլ շիմ կանա զաղի:
ՆԱՏԱԼԻԱ, գրկելով Խայուն:

Գէթաղվանէ, Խայի ջան. ուրիշներէմէն ի՞նչի՛
Հողվիմ:

ԻՍՍՅԻ

Աշխ, կնիկն ով մօգօնից:
ՆԱՏԱԼԻԱ, փաթաթուելով:
Գէնացվալէ, Խսայի ջան, թէ ինձ կու սիրիս:
ԻՍՍՅԻ, առանձին:
Արի ու դիմցի: (Նատալիային:) Տօ, քիզ վմւնց չիմ
սիրի, հոքիս էլ չիմ խնահի քիզ:
ՆԱՏԱԼԻԱ

Բառ կու առնիս:

ԻՍՍՅԻ

Զարէս ինչ է վուր չիմ առնի:
ՆԱՏԱԼԻԱ, վրայ ընկնելով, Խսայուն պինդ համբուրում է:
Ախ, Խսայի ջան:

ԻՍՍՅԻ, առանձին:

Սաղ անգաճ գնաց: (Համբուրում է Նատալիային:)
Քու մէ պաշը քառսուն թուման աժէ, նատալիա
ջան... (Յանկարծ ձեռքը ճակատին տանելով.) Վայ մէ,
բանս մնաց... Էսէնց խափից ՚Եւէն Աթամին, է...
Տօ, մէ գնա Կարապիտին զթի, է. առա էստի մը-
նում իմ:

ՆԱՏԱԼԻԱ

Էս սահաթիս, Խսայի ջան:
Թոչիրտալով զուրս է գնում ծախս դռնից:
ԻՍՍՅԻ, Նատալիայի ետեւից նայելով եւ նրա զուրս գնա-
լիս վեր թոչելով:
Ըսէ, չէնի կի ճիրի մէ...

ՏԵՍԻԼ. Ճ

ԻՍՍՅԻ, մենակ:

Աղունակ է զրուստ... Լաւ բան է կնիկը, 'ես ու
իմ հոքին. զրուստ բլրուկի վարթ է, վաւր հուտ իս
կալնում, լաւ Կախէթու զինու հանգը հարփեցնում
է, ամա մէկ էլ տեսար սրտով հուտ կալնելիս՝ էն
մոնղուէկ փուշը ցցվեցաւ մէրաշ քնթումն ու իժում,
ինչըու հանիլը, խան խէր փոշտան ու խան սաբր...
(Գլուխը շարժում է.) Ախար օխտը թուման էլ դէրիտ
կուլի... Պիտի յօրէսի զէնը զնանք զիզումն ապրինք,
թէ չէ վայ միր միխիլը... Սուտ չէր ասում էն խիզճ
օսկան Պետրովիչը, թէ « էս պիտի ու էն պիտէ-
մէն զահլէս զնաց, » կ'օսէ... է'հ, մախլաս... ջնան-
դամը օխտը թումանը, թաք մէ էս բանը զլուխ զայ
ու ամազս աժեհնայ... Զիր արիւը, հազար թումնի
ապրանք վուր ծախիլ էի, էս զազա չէի չարշվի.
զրուստ խաթարալա է, էլի, ալչիկ մարթու տալը. էն
էլ ով զիդէ վնաց կու անց կենայ... Տէր Աստուճ,
Դուն դէվէր մախիկ անիս ու զոնց մէկի մօդ չաման-
շեցնիս ինձ... Ախ, ինչ էլտ էն մարթը, արա
թէ զայ:

Կարապետը մոնում է ձախս դռնից:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԽՍԱՅԻ, ԿԱՐԱՊԵՏ

ԻՍԱՅԻ

Ես մոր իս, Դարասիմ եակուլիշ:
ԿԱՐԱՊԵՏ

Հը, մենակ մոր իս էկի. էլ չէ զալի:
ԻՍԱՅԻ

Վաճանց չի դայ, ամա մէ անիծած դէղիդա է ու-
նեցի էլի, վախենում իմ բանը շատրաբ անէ. ուրիշ
հանգն է խօսում, զահրումար է ուղում. ասում է
ինչըու չիս բերի, վուան էլ չիմ փոխիլ տա, կ'օսէ,
ու հիմի մնում է ինձ տղի տանը:
ԿԱՐԱՊԵՏ

Տօ, էրէկ թէ դէղիդին էլ խոստացանք ու դէղի-
դի մարթուն էլ:

ԻՍԱՅԻ

Մէկն էլ նուր լուս ննդաւ, մէ խիստ աշաղլար
իմքին է:

ԿԱՐԱՊԵՏ

Գէ, զնա իրան տու, ինչ ուզում է. ամա էլ մի
ուշացնի, թէ չէ մէ մամիդա էլ ուրիշ կու լուս ննդի:
Էլ էտու համա մոր էիր զալի, հէր օխնած:

ԻՍԱՅԻ

Վահ, խոռն թումնէն մէ զրօշ պակաս չէ անում:
ԿԱՐԱՊԵՏ

Էհ, զժվիլ իս, թէ հանաք իս անում:

ԻՍԱՅԻ

Աստուծ գիղենայ, զուրթ իմ ասում:
ԿԱՐԱՊԵՏ

Արա, 'ես անմիդ խոռն թուման կու դէն զցիմ.
Խուրմա է:

ԻՍԱՅԻ

Տիս դէն զցի ու էն աղէն չի դայ:
ԿԱՐԱՊԵՏ, վախեցած:

ԻՆՉԻ:

ԻՍԱՅԻ

Աստուծ վուշ զիդէ էն անիծած դէղիդի զլուխը.
մէրաշ ասաւ թէ Մաքքրիտի սիրունութինը առչի
իմանալս է, կ'օսէ:
ԿԱՐԱՊԵՏ, շփոթուած:

ԻԺՈՒՄ:

ԻՍԱՅԻ

Իժում էլ ինչ, կինադամ բանը մօշլա էր ըլում,
ասում իմ: Յայ դէս, յայ դէն, վունցոր էլաւ էլի
սարքեցի:

ԿԱՐԱՊԵՏ, շունչ առնելով եւ կիսաձայն:

ՈՇԻՓ:

ԻՍԱՅԻ, շարունակելով:

Ճէնց բռնէ հոքիս ծախեցի քու խաթիր, իմ հո-
քին զիղենայ. դէղիդին նշներավ իմաց արի, վուր
միթամ ինչ ուղում իս կու տանք, ու էն աղին ասի
անիճմումը, թէ դէղիդէտ խափում է: Ախար, սիրու-
նութինն ու զղճութինը հաւնելու վրայ չէ. թէ կի
աղէն մէկ հաւնիլ է ու էլի կու հաւնի, մւմն ինչ զաւի
կայ: Վիրշը, ինչ էրգարացնիմ, դէղէն տուն տա-

րաւ տղին շուր հաքցնելու ու էն անիծած դէղիղէն
բաց ասաւ ու չամանչեցաւ, թէ վիրչի դինը խոռն
թուման է, կ'օսէ, թէ չիս ըերի, կ'օսէ, զիփ մէտի
մօշլա կ'օնիմ, կ'օսէ, չիս զիգիմ վուր ուրիշ օմքին
է տեսի, կ'օսէ: չիմի լինչ խօսկ ունիս:

ԿԱՐՍՊԵՏ

Ի՞նչ... խօսկ ունիմ: Ի՞նչ... խօսկ... պիտի... ու-
նենամ, ախպէր. տար սիլցու, ջանս զուս զայ,
պիտի համբրիմ, ուրիշ լինչ շարա ունիմ. զնա վի-
կալ, էլախտ կնդաս ձեռաց պահ տվի:

ԻՍԱՅԻ

Քի պէս լաւ մարթ աշխըքումը չի ըլի, Գարա-
սիմ եակուլիշ:

ԿԱՐՍՊԵՏ

Դէ, զնա, ջալդ արա, Խսայի: Ուրիշ, դէղէն լինչ
է ասում տղինը:

ԻՍԱՅԻ

Ուրիշ լինչ պիտի ասի, վոնցոր քի մօդ խօսում
էր, էլի էնէնց է քարտում տղին. ուրախու վուտի
վրայ չէ կանգնում. ասում է՝ չս դադա փնտղ ու բա-
ժինք կուլի՛, կ'օսէ:

ԿԱՐՍՊԵՏ

Լաւ կնիկ է էլեռում, այ. ինձ շատ դուր էկաւ:
ԻՍԱՅԻ

Վահ, Ասածու հոքի է, ասում իմ:
ԿԱՐՍՊԵՏ

Դէ, բաս չնւստ դնա, ամա էլ տղիմէն չհիռա-
նաս, ինչըու չբերիս:

ԻՍԱՅԻ

Էս սահաժիս էւէտ: (Շտապով դնում է դէպի ձախ
կողմը, յետոյ յիտ է գտնում:) Ամա, ինչ միտս էկաւ,
Գարասիմ եակուլիշ. խօմ զրմւսալ զիգիս վուր էն
տղին սւրիշ ախչեկ չէ տեսի. ով զիգէ, մէքաշ չխայ-
տառակլինը:

ԿԱՐՍՊԵՏ

Աբա, քիմէն չիմ արմնում, Խսայի՛, 'ևս թաւաքա-
լի բան կու բռնիմ:

ԻՍԱՅԻ

Օղորմի քու հօքը, էս սահաժիս էւէտ ըերիմ:
Շտապով դուրս է դնում ձախ դռնից

ՏԵՍԻԼ ՃԲ

ԿԱՐԱՊԵՏ, մինակ:

Հ'մ... վրուստ ճքնաւուր է չս Խսային, Աստուծ
զիգենայ, իր հալալ միամտութենով... (Լուս ու
զարձ է անում:) Չիմի բանը վուր զուրթ բացվի...
(Վտածմունքի մէջ է ընկրմվում:) Զէ, չէ, ամեն բան
լաւ ունիմ սարքած... Օղունդ մէ նշանը տալ տամ
ջեր, մնացածը իժում 'ես զիգիմ:
Գուրս է դնում աշ դռնից:

—∞—

ՏԵՍԻԼ ԺԴ

ԽՍԱՅԻ, ՆԱՏԱԼԻԱ

ԻՍԱՅԻ, շտապով դուրս դախով ճախ դռնից եւ փողերը
ծոցը դնելով:

Հա, հա, էս սահաթիս դալիս ինք:
ՆԱՏԱԼԻԱ, հետեւելով Խայուն:

Ինչըու զուք զուքաք, հոքին կու զուս զայ խղճինք:
ԻՍԱՅԻ, շտապով:

Էրանի մէ զլուս զայ բանը, կէս սահաթ ուշը ըլի,
ի՞նչ հաջաթ: Ամա, Նատալիա... (Բռնելով ձևոքը, առաջ
է բերում:) բէդամաղ մի ըլի, ինձ կու սիրիս, էլի իմ
հարցնում... ծովի տալդի պէս զնում ու զալիս է
մտկում... Խօ զբնւստը զիգիս վուր էրէղ օշով տղայ
չէ ռաստ էլի քիզ էսաի զոանը:

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ էրազ իս տեսի, չիմ զիզի. թէ վուր ասի՞
չէ. քանի հարցնիս:
ԻՍԱՅԻ

Քու արիւը:

ՆԱՏԱԼԻԱ

Իմ արիւը, քա. չիս աւամում:

ԻՍԱՅԻ, ազ ու ճախ նայելով զրկում է Նատալիային:

Ըհհ, քու հոքուն մնոնիմ, քու հոքուն:
Պինդ համբուրում է եւ շտապով զնում:

ՆԱՏԱԼԻԱ, բռնելով Խայուն:

Իմքին բան կայ. ի՞նչ իս թաքցնում:

ԻՍԱՅԻ

Իժում, իժում, էտ իժում, հիմի շտապում իմ...
(Մի բանի բայլ զնում է:) Ինչըու զոն վիքք արա՞ էն
հանգի լաւը՝ ուրիշ էլի ի՞նչ զ'ուղիս սրտով, առնիմ
քիզ համաւ: (Վ.քայ բնկնելով:) Ճիրի մէ շէնի, աղունակ:
(Կրկին համբուրելով:) Ըշհմ:

Դուրս է վաղում դիմացի դռնից:
Դուրս է վաղում դիմացի դռնից:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆԱՏԱԼԻԱ, մինակ:

Էս ի՞նչ խարար է:

Զեռքը ճակատին տանելով, մնում է անշարժ, մտած-
մունքի մէջ խորասուզուած: Պատկեր:

ՎԵՐՃ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆԻ

ՑԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Յեմը ներկայացնում է Կարապետի տաճ ղաւիթը: Խորքում,
ձախ կողմը, պարտէղ, իսկ աջ կողմը՝ տունը, որի սասափի
լուսաւորուած պատուհաննելլը դիտնից բաւականին բարձր
էն: Գաւթում — Աջ կողմը սրահ՝ կողած փոքրիկ պատու-
հանով տուչին կարգում և նոյնպէս կողած զոնով եր-
կրորդ կարգում: Այս սրահը այնպէս է զուրս զբած կուփո-
ների առջև, որ նրա պատուհանից, որ դանվում է հանդիսա-
կանների գիմացը, անհնարին է տաճ պատուհանները տես-
նել: Ձախ կողմը, տուչին կարգում, մեծ ծառ, իսկ երկրոր-
դում՝ զաւթիղ զուրսը, որի երկու փեղկերն էլ բոլորովին
բաց են մնում մինչև վերջը: Ետուի ետեկից երկնքում փայ-
լում է լուսինը, որ լուսուսում է պարտիզի մեկ մասը:
Գաւթումը բաւականին մութն է:

ՏԵՍԻԼ Ա. Ռ Ա. Զ Ի Ն

ՍՍՐԳԻՍ, մենակ, աւելը ձեռքին երդելով մտնում է զաւ-
թի դոնից:

«Արագ կըրաղընդա եամ, լամօ,
«Հեշմէյ շըրաղընդա եամ. (Կրկնել:)

«ԻԺ իլմիշամ եարըմի, լամօ,
«Օնուն սօրաղընդա եամ: (Կրկնել:)
«Լամօ, լամօ, լամօ, լամօ,
«Սարդի սուսան ջան, լամօ,
«Եարի վաֆաղար, լամօ,
«Օ բօյա դուբրան, լամօ »: *)

Աւելը մի կողմն է դնում:

Էս էլ պլրծ այս... Դիվ հաղիր է. մնացիլ է հիմի
վուր նորափեսէն չնուր րերէ ու հրեղէն Մարքրիտին
պլուշտի անէ. ամա էն սրտանց պաշ անելիս պլու-
ներուն վուր մէ քիչ սիպտըկաղիդ կոչի, 'հս միդ
չունենամ... չաջաթ չէ, կանֆէտ կու զիդինայ.
մայինց նշուանտէք է ու նշուանտէք... Օհ, հօ, հօ,
հօ, չանդան բէզար էլայ էսօր շատ բան շինելէն:
Յայ՝ դէսը զնա, զէնը զնա, էս տար, էն բի, էս վի-
կալ, էն վեր զի... զբուստ ցաւ է զուլուզ անիլն,
էլլե... էրնէկ նօքարն ինչ սափդելու էր, վուր ստիզ-
ծում էր Աստուծ... Ում տանն ինչ պատահի, նօքրի
ջանը պիտի դուս զայ. աղէքն ուրախանան՝ դնն

*) Թռւրժերէն է:

Արաքսի ափերումն եմ, հոգեանկ,
Աշքերիդ բոցելումն եմ. (Կրկնել:)
Կողցըել եմ սիրուհուս, հոգեանկ,
Նըրան որոնելումն եմ: (Կրկնել:)
Հոգեանկ, հոգեանկ, լսն հոգեանկ, հոգեանկ,
Գալար շուշան ջան, հոգեանկ,
Սիրոյդ մտերիմ, հոգեանկ,
Հասակիդ մատաղ, հոգեանկ:

շարշըլի, աղէքը տիրին՝ էլի դուն շարշըլի, դիկ
շարշըլի ու շարշըլի մէ զլուխ... է՛հ, Աստուծ, բարէմց
ստիղծում էիր ու ստիղծում, դիմունին մէտի պա-
րուն կու ստիղծէիր մէրաշ ու պրծնէիր մէ, է...
Վախտ ու բէվախտ՝ (Կարասկիտի ձայնով:) — Սարքիս:
(Եթ ձայնով:) — Համմէ:

ՏԵՍԻԼ Բ

ՍԱՐԳԻՍ, ԿԱՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ, դուրս դալով աջ կողմից, կանչում է:
Տօ, Սարքիս:
ՍԱՐԳԻՍ, դռալով:
Համմէ:
ԿԱՐԱՊԵՏ, հանգիստ:
Ի՞նչ իս զռում, տօ. վնրթէնն իս:
ՍԱՐԳԻՍ
Էստի իմ, աղա ջան:
ԿԱՐԱՊԵՏ
Տօ, հսային լոօմ չէ էկի էլի:
ՍԱՐԳԻՍ
2է, աղա, չէ էկի:
ԿԱՐԱՊԵՏ, նեղացած:
Լօրի է զրուստ էն մարթն, էլի: (Լոռմիւն:) Մարթ
ինչ բան ունենայ, նրան պահ տայ:
Բարկացած ման է դալիս:

ՏԵՍԻԼ Գ

ՆԲԱՆՔ, ԽՍԱՅԻ

ԻՍՍՅԻ, ներս վաղելով գաւթի դռնից, կանչում է:
Սարքիս, Սարքիս տօ Սարքիս... Ուր է կորի
էն անիծածը:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ է, աղա, լինչ:
ԻՍՍՅԻ
Տօ, էն տղէն լոօմ էստի չէ:
ՍԱՐԳԻՍ
Ի՞նչ տղայ:
ԻՍՍՅԻ
Այ, միր վեսացոնն:
ՍԱՐԳԻՍ
Ունդն էլ չիմ տեսի:
ԻՍՍՅԻ
Վայ մէ, լինչ անիմ հիմի. բաս իսկի օշով չէ էկի
էստի:
ՍԱՐԳԻՍ
2է, ասում իմ՝ վուր օշով չէ էկի:
ԻՍՍՅԻ
Վնրթէնը ննդնիմ հիմի, լինչ անիմ, լինչ ասիմ
Կարապիտին, սաղ-սաղ • կ'ուտէ ինձ, թօխլօ ձուի
պէս կու խոշտէ. վնրդի գթնիմ, մւր գնամ, վնր-

թէնը գնամ, վճրը ջուրը ննդնիմ, վճրը սարը կոր-
շիմ... Կուլի էլի տանը զթնիմ:

Կամհնում է զնալ:

ԿԱՐԱՊԵՏ, բռնելով խայուն:

Մուլափ, մուլափ հալա, ի՞նչ իս տառմ:

ԻՍԱՅԻ, կակաղելով:

Վը վը վը վունչիչ:

Սարդիսը բրբիջը պահելով մի կողմն է բաշվում:
ԿԱՐԱՊԵՏ

Հը՛, բերնումդ թիքա ունիս. Ես թէ քիզ ասի
վուր էն տղիմէն շհուանաս:

ԻՍԱՅԻ

Տանը տեսայ ու հիւացայ:

ԿԱՐԱՊԵՏ

Բաս տանը չէ. ի՞նչ է էլի:

ԻՍԱՅԻ

Վուր զիդենամ, խօ էլ սարէսար չիմ ննդնի:

ԿԱՐԱՊԵՏ

Ախար, տեսնում իմ վուր շնորք չունիս, է:

ԻՍԱՅԻ

Ես ի՞նչ անիմ, Գարասիմ եակուլիչ. զնացի հա-
լալ միամիտ, վուր ասիմ շնուր բերէ. ամա ինչրու
իմ զնալը, չիմ զիդի թէ թազա ի՞նչ միտկ է անց
կենում էն տղի զլխումը, զգակը վիր է կանում ու
հայզա... Զատ դէս ու դէն ննդայ, չզթայ. հիմի կի
գէղիդէն ուստ էկաւ ճամփին, տաւ վուր իր քուիր
տղէն էստի է էկի միթամ, ամա մէր է:

ԿԱՐԱՊԵՏ

Իժում վուզն ի՞նչ արիր:

ԻՍԱՅԻ

Փուզն էլ էն անիծած գէղիդէն առաւ ձեռնէմէս.
գէմուղէմը էստի էր վազում: Դիփ մէտի էս սահա-
թիս էւէտ քար ու քանդ կ'օնիմ, թէ չիս տվի, կ'օ-
սէ. չարէս ի՞նչ էր:

ԿԱՐԱՊԵՏ, բարկացած:

Ասած է, ախար, է, խսայի, թէ զիլի շլինքն էն-
դուր է հաստ, վուր իր բանը իր ձեռով է շինում:
Ես վուր քի վրայ չէի զցի էս բանը, ինչրու հիմի
նշանը տուած էլ էր ու պրծած էլ:

ԻՍԱՅԻ

Ախար, ինձ վրայ անմիդ իս չարանում, Գարասիմ
եակուլիչ, Ես ի՞նչ անիմ:

ԿԱՐԱՊԵՏ

Էն անիս, վուր է գէղիդէն էլախտ վուր զահրու-
մարն ուզից, պիտի վունցոր էլիլ էր աւատացրիլ էիր
վուր կու տանիք: Էլ ինձ մօդ մէր էիր վազում, մւր.
վահսենում էիր վուր չէի տվի:

ԻՍԱՅԻ

Գանա լսից ինձ էն անիծածը... Նըա անումը
կտրէ Աստուծ:

ԿԱՐԱՊԵՏ

Մէ խօսկով չէիր պիտի էլախտ էկի, չէ: Զիս
զիդի վուր նշնելու տղէն խամ թոչունք է. մւր էիր
հիւանում, մւր, քիզ իմ հարցնում:

Բարկացած ման է զալիս:

ԻՍԱՅԻ

Բաս հիմի ի՞նչ անիմ:

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Այ, գահրումար անիս զլիխտ: (Խայուն:) Տօ, էլ ի՞նչ իս էտի ցից էլի. զնա վուրդի վուր ըլի գթի ու բի, թէ չէ միր մէշը չալէն կտրած է, Աստուծ զիդենայ:

ԻՍԱՅԻ

Ալս, Գիօրդի ջան, ձեռնէմէս թռար, Էլի:
Գուրս է գնում գաւթի դոնից:

ԿԱՐԱՊԵՏ, ձեռքը թօթափիլով եւ առանձին:

Քու մարթ ասողին էլ ի՞նչ ասիմ:
Բարկացած գուրս է գնում աջ կողմից:

ՏԵՍԻԼ Գ

ՍԱՐԳԻՍ, մենակ:

Հեռնէմէս թռար, կ'օսէ: Վահ, մկրաւ է, թէ ա-
զունակ... Թամյին սապօժնիկը բան է ասի էն տղին
ու նա էլ թախ է կացի: Խիղճ Մարքրիտ, բախտը
չէ կտրում, ի՞նչ անիս:
Գուրս է գնում աջ կողմից:

ՏԵՍԻԼ Ե

ԻՍԱՅԻ, ԳԵՈՐԳ

ԻՍԱՅԻ, գաւթի դուն մէջ:
Ախար, էտ ի՞նչի՞ր իս առում, Գիօրդի ջան, մարթ
խափիմ ու էն էլ քի՞դ... Է՛տէնց իս ճանչնում ի՞նձ:

ԳԵՈՐԳ, նոյն դռանը:

Ուրեմն ի՞նչի՞ վախար, ի՞նչի՞ չսպասեցիր ի՞նձ, ի՞նչ
առեսուր սարքեցիր մօրաքրոջս հետ... (Մտնելով
դաւիթը Խայուն մի քանի քայլ առաջ է բերում եւ ցածր
ձայնով:) Այս կողմն արի, մարդիկ են անցնում... Ի՞նչ
է նշանակում այս բոլորը:

ԻՍԱՅԻ

Գուր էլ ձեռը չվիկալաւ՝ էն օլնած հոքին...
ԳԵՈՐԳ, զգուշացնելով:

Կամաց...

Խօսակցութիւնը շարունակվում է ցածր ձայնով:

ԻՍԱՅԻ

'Ես էլ ի՞նչ էի արի. էկայ վուր Գարասիմ Եակու-
լիշին հարցնիմ... Էտ հանգի կնիկ գանա էլի ստիղծ-
վիլ է աշխաքումը. անմըթի իմ, քունը դէղիդա է:
(Առանձին:) Այ, նրա վիզը կոտրէ Աստուծ:

ԳԵՈՐԳ

Ի՞նչի՞ ի՞նձ չհարցըիր, ի՞նձ, եթէ զու դըուստ
մարդ ես, ի՞նչի... Բայց ձեզ հետ ի՞նչ խօսի մարդ...
Դու զնա խկոյն Գարասիմ Եակուլիշից ներողութիւն
ինդիր իմ կողմանէ. ասա, որ այս գիշեր չկարողա-
ցայ, բան պատահեցաւ, ասա. մէկ խօսքով՝ ի՞նչ
կամենաս հնարիր, իսկ էկուց ես ի՞նքս բոլորը կը-
պարդեմ...

ԻՍԱՅԻ

Հանաքի վուխտը չէ, Գիօրդի ջան, է:
ԳԵՈՐԳ

Գնա, զնա...

Կամենում է զնալ:

ի ՍԱՅԻ, ձեռքը բռնում է:

Ախար, էս խօ քարուքանդ էլաւ զիփ. արի զիվիր
զնանք, թէ քու հօր գերեզմանը կու սիրիս. էլի
թաղա բանիր մի մօգօնի, է:

ԳԵՈՐԳ, աղատուելով Խայու ձեռքից:

2է, չէ: (Խայուն առաջ բերելով:) Այսահղ մէկ բան
կայ... իմ տեսածը Մարգրիտը չէ:

Ի ՍԱՅԻ

Վա... Արի, ախարէր, քու աճկով տիս սուտն ու
դուրթը:

ԳԵՈՐԳ

Էպուց, էպուց: (Մի բանի բայլ դնում է և տեսնե-
լով հատավիային սենեակումը պատուհանների մօտ անց-
նելիս:) Ա'հ, նա էր, նա, Խայի. կարծեմ նա էր:
Խայում է պատուհաններին:

Ի ՍԱՅԻ, նկատելով հատավիային անհնատանալիս և առանձին:

Վա, էս նա էր... (Խայելով պատուհաններին:) ել
օշով չկայ... (Գէորդին, շուարուած:) Մնւլափ, մնւլափ,
լաւ բան միտս էլաւ, ես էս նմուտիս էւէտ Մար-
գրիտին քիզ շանց տամ հէնց էս ակօշկումը:

ԳԵՈՐԳ

Ի ՆՀԱՓէԱ:

Ի ՍԱՅԻ

'Ես մէ զիւիր զնամ, դուն ինչըու էտնցներումը
ման արի: (Գնալով:) Հէնց էս նմուտիս էւէտ:

ԳԵՈՐԳ

Կաց, կաց:

Ի ՍԱՅԻ

Սնւ, վուր փիլիսօնի խիլք իմ ունեցի: Մի վա-

լսնա, էս դռնիրն ինչըու կէս զիշիրն էսէնց բաց
է... (Վաղում է գեպի աջ և յատ է զանում:) Թէ քու
տեսածը չէ, ախարէր, թէզուզ էլ բարի լուս մի տա
ինձ յօրէսի դէնը:

Գուրս է վազում աջ կողմից:

ԳԵՈՐԳ, մհանկ, վորք լուռթիւնից յետոյ:

Գոնեա վերջապէս բոլոր կասկածներս կը փարա-
տուեն... Բայց ոտի ձայն է լսվում...

Գուրս է գնում գաւթի դռնից:

ՏԵՍԻԼ Զ

ԿԱՐԱՊԵՏ, Ի ՍԱՅԻ, գուրս են զալիս աջ կողմից:

ԿԱՐԱՊԵՏ

Ճը, էլի իմքին կմյ:

Ի ՍԱՅԻ, շշնջելով:

Սնւ, սնւ, Գարասիմ Եակուլիչ, էն տղէն էստի է:
Աբան, վմնց անինք վուր է Մարգրիտին էստի ակօշ-
կումը դուս բերինք. թնդ մէկ էլի տեսնէ, չէ աւտում
վուր իր տեսածը Մարգրիտն ըլի:

ԿԱՐԱՊԵՏ, նոյնպէս:

Ի՞նչ իս ասում, Խայի, գժվիլ ի՞ս:

Խօսակցութիւնը շարունակում է շշնջելով:

Ի ՍԱՅԻ

Աստուծ զիղենայ, առանց էս չի ըլի:

ԿԱՐԱՊԵՏ

Ճօ, թնւղ տուն գայ, էնդի վաւնցոր ուղենայ
տեսնէ:

ԻՍԱՅԻ

Զի ըլի, ասում իմ, սիրալ խիստ ին խարար արի. գէհ, չնաստ, թէ չէ էլի ձեռնէմէս կ'էհայ: առաջ
ԿԱՐԱՊԵՏ, շփոթուած:

Հըմ... հըմ... հըմ... արա, վմւնց անինք. քիղ
վուր տեսնին, ուփրօ խիալ կու տանին... (բարկա-
ցած:) Ա'լս, իսայի:

ԻՍԱՅԻ

Վա, 'ես էստի կու մնամ:
ԿԱՐԱՊԵՏ

Հէ, չէ... հա, լաւ, լաւ... Դուն էստի թախ կացի,
Էն տղէն շտեսնէ քիղ, զնամ 'ես սարքիմ. ոյ, էստի
սարայումը կաց. (Տանում է Խայուն դէպի սրահը և
դուռը բաց անում:) վուտդ գրօշկին շխիմ:

Ներս մղելով Խայուն, նշաններով զզուշացնում է
նրան ձայն չհանել:

ԻՍԱՅԻ

Լաւ, լաւ:

Մտնում է սրահը:

ՏԵՍԻԼ Է

ԿԱՐԱՊԵՏ, մնակ. սրահի դուռը փակում է Խայուն վր-
րայ, յետոյ երկաթէ փականով դուռը կողպում:

Նալաթ քի, չար սատանայ... Զիր արիւը, իմ դամ-
րի թիլիրը մէկն էրկուսով աւելցաւ. զնամ դիվիր,
նատալիին նստեցնիմ, մէ խաղ էլ ասեցնիլ տամ,
(ննդալով:) խիլքէմէն կու'լի պարուն փեսացուս:
Գաղտաղողի դուրս է դնում աշ կողմից:

ՏԵՍԻԼ Ը**ԼՈՒՌ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Գէ՛ՌՈՒՊ, մնակ. մտնում է գաւթի դռնից, ծածուկ նայում
է այս եւ այն պատուհանին, բայց յանկարծ, ոտի ձայն
լսելով՝ դուրս է դնում նոյն դռնից:

ՏԵՍԻԼ Թ

ԱՄՐԻՒՍ, մնակ. դուրս է գալիս աշ կողմից:

Էս էլ քիղ նշուանաէք... Մնամ վուր բանն էլ զը-
լուխ չէ գալի, թէ չէ մուր է էն տղէն, ինչ՞ չէ հա-
մեցէք լլում... Խիզճ Մարքրիտ սիրալ կի էնդի
զնում ու գալիս է. իժում աւտաս ինչ ումիկ ունէք,
է... Փու, զսմաթ. ինչ ասիմ քիղ... Ափսուս իմ ա-
մագ... չիմի վիկալ ու իմ շինած ու սարքած բանի-
բը յիդ էլի իմ ձեռով քար ու քանդ արա... Վուր
ասում իմ, չի ըլի, ախար, է. էլի իմ միճկի զօլը պիտի
կտրվի... Մէ քանի մանէթ բախչիչի ումիկ ունէի,
էն էլ փուստ էլայ: (Ցուցամատը ճակատին ըսելով:) Ի՞նչ
զբած է էստի, զրած է... էհ, էն էլ ձիր շարը տանէ:
(Թառ ածելու ձայն է լավում: Սենեակի պատուհաններում
երեւում են Նատալիան եւ Կարապետը. Նատալիան նրս-
տում է միջի պատուհանի մօտ, իսկ Կարապետը շուտով
նեռանում է:) Սու հալա... չա, էս միր դուքնի աշ-
կիրան է թառ ածում. հալրաթ Մարքրիտին ուղում
ին իխտիլաթ շանց տա:

ՏԵՍԻԼԺ

ՆԱՏԱԼԻԱ, սենհակում պատուհանի մօտ նատած, ԳԵՂՐԻՎ,
ԿԱՐԱՊԵՏ, ՍԱՐԳԻՍ, գաւթում, ԽՍԱՅԻ, առաջ սրանի
պատուհանում, յիսոյ գաւթում:
ՆԱՏԱԼԻԱ, թառի ներդաշնակութեամբ երգում է առանց ընդ-
հատելու մինչեւ վերջը. իսկ միւս զործող անձննք խօ-
սում են միայն այն ժամանակ, եթե Նատալիան շունչ
է առնում: Փակաղծում նշանակած Խայու եւ կարա-
պետի խօսակցութիւնը ոչ միայն շշնչելով է կատար-
փում, այլ արտայատվում է նաև շարժուածքներով:
ԱՌԻ, ի՛մ սիրեկան, ինձմէն եփուացար,
ՍԱՐԳԻՍ, ցածր ձայնով:

Էս լաւ է:

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգել:
Վիզ ի՞նչ զեր արի, փուր ինձ ուրացար.
Այրչը քէ էս էր, էլ ուր մօդ կացար,
Քու սրի սէր ինձ ուր խոսացար:

ՍԱՐԳԻՍ, զմայլուած եւ ցածր ձայնով:

Վոխամկ:

Կարապետը կամաց-կամաց զուրս է գալիս աչ կողմից,
սրանի դուն փականը շօշափում է, յիսոյ սրանի մօտ կուչ
է գալիս: Սարգիսն ապշած, ծածկվում է ծառի տակ և
այնտեղից հետաքրքրութեամբ հետևելով բոլոր անցքին,
հետքնեաէ զարմանը է ցոյց տալիս: Խային սրանի դուռը
ներսից կամաց շարժում է. Կարապետը, շփոթուելով, կըր-
կին շօշափում է դրան փականը:

ՆԱՏԱԼԻԱ, շարունակելով, երգում է երկրորդ տունը:
Սուր Եւսիս նիտք սրտիս խփեցիր,
Քու սիրու կրակը ջամս զցեցիր.
ԳԵՂՐԻՎ, գարձեալ մտնելով գաւթի դռնից եւ ցածր ձայնով:
Այս ձայնը...

Խային սրանի պատուհանը բաց է անում, զլուխը
դուրս բերում եւ զարմացած ականջ դնում, բայց
Նատալիային չէ կարողանում տեսնել:

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգել:
Մրցիս եաւեռուն մելում չը խնցիր,
Երած ու խորված մըսէն զցեցիր:
ԳԵՂՐԻՎ, տեսնելով Նատալիային, ցածր ձայնով:
Նա է:

Խային ապշած երեսը խաչ է հանում:
ԿԱՐԱՊԵՏ, տեսնելով Խայուն, սաստիկ շփոթվում է, բար-
կանում եւ շշնջում, առանձին:

Սատանականց սա էլ էսաի է զուս բերի զլուխը:
Մոտենում է նրան:
ՆԱՏԱԼԻԱ, շարունակելով, երգում է երրորդ տունը:
ԱՌԻ, սիրեկան, ի՞նձ մի ուսին սրա,

ԿԱՐԱՊԵՏ, Խայուն, շշնջելով:
Մարգրիտին նստեցրի ակօշկումն ու խաղ էլ իմ
սահցնիլ տալի:

Մ Ի Ա Ս Ի Ն

ՆԱՏԱԼԻԱ, շարու-
նակում է երգը: [Մալիկ, Է. ինձ նատալիի ձէ-
կըկարս մի՛ նը թվաց:]
Ըուր սա, մէկ կարաՊԵՏ, նոյնպէս:
մըսի՛կ սրա, [ի՞նչ իս սարսադ զուս տալի:]

Կարապետը, վախենալով որ Խայրին չսէ Շատալիայի
ծայնը, վարպետութեամբ մօտ է քաշում նրա
զրովոր եւ, մէկ ականջում վախալով, միւս
ականջը ձեռքով ծածկում է: Գէորգը վմայլ-
վում է:

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգը:
Խողձա՛ բու դուլին, մէկ ա'նգած արա,
ԻՍԱՅԻ, ցածրաձայն:

Հօշաղ Մարքսիտ:
ԿԱՐԱՊԵՏ, Խայրու բերանը ծածկելով:

Մնւ...

ՆԱՏԱԼԻԱ, շարունակում է երգը:
Քու բաղցը ձենին ինձ ա'րժան արա:
Գէորգը հիացած առաջ է զալիս եւ նորից մօտենում
է պատուհանին:

ՆԱՏԱԼԻԱ, վեր կենալով, կրկնում է:
Քու բաղցը ձենին ինձ ա'րժան արա: *)

Պատուհանից ճեռանում է: Դադարում է Խարը: Կա-
րապետը սրահի դուռը բաց է անում:
ԳէՈՐԳ, ցածր ձայնով կանջում է:

Խայրի, Խայրի... (Յափշտակուած այս եւ այն կողմն
է ընկնում:) Ա'ս, ի՞նչ եղաւ...
Անհետանում է:

*) Եյս երգի շարունակուրիւնն ու վերը՝

Թէ աղանձախ դուն չիս խմանա,
Եւ եսեց կինին ես չիմ զիմանա.
Գրուխս կու սպանիմ, Ասուն զիմենայ,
Խուլի բու սէր սրէս վիրանայ:

ԿԱՐԱՊԵՏ, Խայրուն, սրահի դրան մօտ, շշնջելով:
Արա, Խայրի ջան, հիմի գուն զիդիս:
ԻՍԱՅԻ, հանդիպում է Սարգսին եւ զրկելով նրան, շշնջում է:
Արա, Գիօրգի ջան, հիմի...
ԱԱՐԳԻՍ

Վայ մէ, զէգի:
ԻՍԱՅԻ, յիտ մղելով Սարգսին:
Տօ, անիծած, վիեսին զիդէի: (Կանչում է:) Գիօր-
գի ջան, Գիօրգի:
ԳէՈՐԳ, առաջ զալով:

Ա'ս, Խայրի ջան, գուն ես:
ԻՍԱՅԻ
Բաս նվ կու'լի... չը՛, սիրտդ տիղն էկաւ. քու խա-
թիր խաղ էլ ասիցնիլ ավի, այ. վմւնց էր:
ԳէՈՐԳ

Հիանալի, հիանալի, Խայրի ջան: Հիմա արի վի-
րկ գնանք:

ԿԱՐԱՊԵՏ, առանձին, ցածր ձայնով:
Հիմի հոքին ձեռիս է:
Գաղտակողի դուրս է գնում աջ կողմից:

ԻՍԱՅԻ, Գէորգի ձեռքը բռնելով:
Ա'րի, Գիօրգի ջան, արի:
Տանում է զէպի աջ կողմը:

ԳէՈՐԳ, աղաստուելով Խայրու ձեռից:
Զէ, չէ, հիւրեղի ճանապարհով, Խայրի:
Գնում է զէպի ձախ:

ԻՍԱՅԻ, Գէորգի փէշը բռնելով:
Լաւ, լաւ:
Գուրս են գնում զաւթի դռնից:

ՍԱՐԴԻՍ, մենակ:

Ե'սէնց էլ օյին: (Ներկայացնելով ձեռնածու պարսկին
կապիկ խաղացնելիս:)

«Փասլի բըհար,

«Սուրաթի եար,

«Զէշմի խումար,

«Լալի նըգեար,

«Դադէ շաբար

«Բար դիլի զար: »*)

Կըրբ...

Գուրս է վաղում աջ կողմից: Վարադոյրն իշնում է:

ԱՐԱՐՈՒՀԱԾ ԶՈՐՔՈՐՑ

Ամենաշքեղ դահլիճ Կարապետի տանը՝ թանկագին կահ-կարա-
սկով զարդարտ: Աջ, ձախ և դիմացը գոներ: Դահլիճի
յատակը ամբողջապէս ծածկած է գորգով, առաստաղից
կախած է զքեղ ջահ վառ մոմերով: Ձախ կողմը՝ բազմոց
սեղանով և բաղկաթուոներով, իսկ աջ կողմը՝ փաքրիկ սե-
ղան երկու աթոռով: Աջ ու ձախ մեծ հայելիք և ոսկեզօծ
կանգէլաբրներ նոյնալէս վառ մոմերով: Խորքում՝ աթոռներ,
գաշնամուր իր բոլորակ աթոռով և ժամացոյց, որի ալաք-
ները ցոյց են տալիս ժամը ութը: Մեղանները ծածկած են
գունաւոր սփոսցներով և գոները նոյնպիսի գրասլիքներով:
Տեղ-տեղ ծաղիկներ: Ժամացոյցը բանում է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳէՈՐԳ, ԽՍԱՅԻ. մտնում են դիմացի գոնից:

ԽՍԱՅԻ

Բառ էտէնց հաւնում իս, էլի, Գէօրգի ջան:

ԳէՈՐԳ

Աննման է, Խսայի ջան, աննման:

*) Պարսկերկն է: — այս:

Գարնան ժամեր,

Անուշ պատկեր,

Խումար աչեր,

Կարմիր թշեր

Սիրոյ նետեր

Սիրոս են ցցել:

ԻՍԱՅԻ

Տօ, վուր էտէնց է ու էտէնց, էսօր էւէտ քննթահ
արա ու պըծի, էլի. էլ ի՞նչ իս ջանջլացնում:
ԳԵՈՐԳ:

Այս, իսայի, ի սէր Աստուծոյ, նորից մի սկսիր,
ես իմ գործը գիտեմ... Դու միայն ծանօթացըն,
ծանօթացըն շուտով:

ԻՍԱՅԻ

Այ, էս սահաթիս, Գիօրգի ջան, ամա, քու արի-
ւը, էս զիշիր էւէտ վուր նշանը տաս ու վիրշացնիս,
խիստ լաւ կ'օնիս:

ԳԵՈՐԳ:

Նշանը, նշանը... դեռ թնդ մէկ ծանօթանանք,
խօսենք, ասում եմ, նշանը մւր կ'երթայ. այսօր շի-
նի, վաղը լինի, ի՞նչ կայ... Գնա, գնա իմաց տուր
որ այստեղ ենք:

ԻՍԱՅԻ

Ինչ քու ասածին իս, տօ՛ 0՛հ, հօ՛, հօ՛, հօ՛,
հէնց դիմ մէտի պիտի քու խօսին ըլի: (Գիօրգը ժրա-
տում է:) Հա, ծիծաղի, սնւտ իմ տառւմ... Այ, ախ-
պէր. Զեր ասիր՝ թէ ինչըս չզնակօմանամ, վուտս
էլ չիմ տուն դնի, կ'օսէ, ու էնէնց բերիր բանը, վուր
Գարասիմ եակուլիչին իր վուտով բերիր քու տուն.
իժում ասիր, թէ իմ տեսածը Մաքքրիտը չէ, կ'օսէ,
ու, փառք Աստծու, վուր էստումն էլ պարզէրես զուս
էկայ քի մօդ. մէկ էլ տեսնիմ կանգնեցար, թէ ջեր
մէ դարձա կտրէմէն էլ պիտի անդզիմ, կ'օսէ. վիկալ
հիմի ու խիղճ ախչկան կտուրն էլ դիւիր տար քու
խաթիր:

ԳԵՈՐԳ, ԺԱՊՈԱԼՈՎ:

Մի վախենալ, իսայի, հիմա գործը իր կարգին
կ'երթայ:

ԻՍԱՅԻ

2է, զուն ինձ ասա՞ վունց իս մաշուր անում.
բանը խօմ զլուկս գալու է...

ԳԵՈՐԳ:

Ի հարկէ. եթէ այսպէս կ'երթայ գործը, այստեղ
էլ ի՞նչ կատկած կարող է լինել:

ԻՍԱՅԻ

Վունչիչ չիմ ուղի, ախպէր, ամակս աժհնայ ու
մէ էրկուսիտ մէտի կուռը կուանը զցած տեսնիմ
ձիզ բոլթա տալիս... Յայ թէ կու խիթարվիմ վրէ-
ներուտ. զիրամալա կու կանգնիմ ուրախու, Աստուձ
զիգենայ:

ԳԵՈՐԳ:

Չուտով, շուտով, իսայի ջան. շատ կարելի է որ
շուտով տեսնես այդ ուրախութիւնը:

ԻՍԱՅԻ

Բաս զառաւ վուր իմը փեսայ կու զառնաս մէ-
լաշ, էլի, Գիօրգի ջան:

ԳԵՈՐԳ:

Այն ժամանակ փեսայ էլ, աղջական էլ, իսայի
ջան. իմ ցանկութիւնն էլ այդ է:

ԻՍԱՅԻ, ՓԱԹԱԹՎՈՒՄ Է ԳԻՕՐԳԻՆ:

0՛հ, քու հոքուն մեռնիմ, Գիօրգի ջան: (Առան-
ձին:) Էսէնց է ղամաթն, այ... (Գիօրգին:) Գնամ էս
նմուտիս էւէտ Գարասիմ եակուլիչին իմաց անիմ:
(Գնալիս, առանձին:) Դրուստ Աստծու բան է, ձիր

արիւը զիզենայ, ևա հէնց հիմիսկ էւէտ դէպիդէն
ձեռաց թլիսմ արաւ իր մըտկումն, անիծածը:
գուրս է գնում ճախ դոնից:

ՏԵՍԻԼ. Բ

ԳԵՈՐԳ, մենակ:

Հետաքրքրական է մարդուս կեանքը, ճշմարիտ.
մէկ չնչին պատահմունք որաեղից ոբաեղ է հաս-
ցնում... երկու օր առաջ ես ինչ կը մտածէի, թէ մյս-
պէս սիրով կ'ընդունուեմ այստեղ կամ մինչև այս
աստիճան կը սիրահարուեմ... Այն, սիրահարուած,
սիրահարուած՝ առանց ճանաչելու, առանց ժանօթ
լինելու... 2է, պէտք է խելքս ժողովեմ և աշխատեմ
սխալ քայլ չանել: Հեշտ բան չէ. այստեղ պէտք է
ամբողջ կեանքիս հարցը վճռուի... 0՞հ, Մարգարիտ,
եթէ քո հսղին համապատասխանում է քո գեղեց-
կութեանը՝ դու պէտք է լինիս իմ սրտակից բարե-
կամը, աղնիւ ընկերս, իմ մխիթարիշ հրեշտակը:
Այն, այն ժամանակ ես կը նուիրեմ իմ բոլոր կեանքը
քո զարգացմանը, քո երջանկութեանը:

ՏԵՍԻԼ. Գ

ԳԵՈՐԳ, ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ, գուրս դալով ճախ դոնից Խայու ուղեկցութեամբ:
Բարի իրիզուն, վուրթի, էս ինչի ուշացար:

ԳԵՈՐԳ

Ներկցէք, Գարասիմ եակուլիշ, մի վոքք կործ
պատահեցաւ:

Միմեանց ձեռք են տալիս:

ԿԱՐԱՊԵՏ

Համեցէք, համեցէք. բարի ըլիքու վուտը, վուրթի:
ԳԵՈՐԳ

Ջատ ուրախ եմ որ ինձ որդի էք համարում:
ԿԱՐԱՊԵՏ, համբուրում է ԳԵՈՐԳին:

'Ես էլ ուրախ իմ, վուրթի, վուրթի պէս փեսայ
ճարկցի. (ԳԵՈՐԳը հեղնօրէն ժպտում է:) շատ լաւ տղայ
ին կովում քիզ. շատ ապրիս, վուրթի: Հերտ էլ լաւ
մարթ էր, օղորմած հոքին, էլախտ խօմ քու գէղին
էլ ասի... իսառումէն պիտի ըլիմ չնորակալ, վուր քիզ
ուսաս էրի. (ԳԵՈՐԳը ողջունում է:) սրա խօսկին խիստ
իմ աւտում, սուտ խօսիլ չի դիղի:

ԳԵՈՐԳ

Ես ինքս համոզուած եմ, որ իսային միշտ ճշմա-
րիտ է խօսում:

ԻՍԱՅԻ

Ջատ մի գովիլք, ախատէք, 'Ես էլ մէ միղուտը
մարթ իմ. առանց սուտ՝ զուրթ էլ չկայ:
ԿԱՐԱՊԵՏ

Համեցէք, նստեցէք, վուրթի... նստի, իսայի:
(ԳԵՈՐԳը գնում է դէպի աջ՝ աթոռ վերցնելու:) ԳԵՈՐԸ,
գէսը համեցէք:

Ճրաւիրում է դէպի բազմոցը:

ԳԵՈՐԳ

ՄԻԿԱՆՈՅԻ Է:

ԿԱՐԱՊԵՏ

Վա, գէթաղլա, փեսայ ջան: (Գէորդը նստում է քաղցողի վրայ. իսկ կարապիտը եւ խային նրա մօտ աթոռների վրայ այնպէս՝ որ կարապիտը գտնվում է գէորդի և խայու մէջտեղը:) Բայ ամեն բանը վիրշացած է միք մէշը, վուրթի, վանցոր խային ասում է:

ԳԷՈՐԴ

Մենք ոչինչ հաշիւ շունինք, Գարասիմ եակուիչ:

ԿԱՐԱՊԵՏ

Մենակ վուղի համա շիմ ասում, վուրթի: Ես հիմիկվան ջնէնիրը մէ քիշ վուղ շիք սիրում, ամա վուղի զաղը գիրացի, վուրթի. ուսումը խիլքի եա- րաղ է, ամա վուղը համ խիլքի եարաղ է, համ կամ- քի. շատ բան, ինչ ուսումով չի կահա շինի մարթ, վուղով կու շինէ:

ԳԷՈՐԴ

Ի հարկէ որ վողով մեծ դժուարութիւնների կա- րելի է յաղթել:

ԻՍԱՅԻ

Աբա, Գարասիմ եակուիչ ջան, վուր զովում էի, հիմի խօմ տեսնում իս, վուր սուտ չէի ասում. ախ վուր վուղի զաղըն էլ ինչ հանդի վիղէ:

ԳԷՈՐԴ, յանդիմանօրէն:

ԻՍԱՅԻ, ԻՍԱՅԻ:

ԿԱՐԱՊԵՏ

Ինձ մօդ պարզէրես իս, Խայի ջան, Աստուձ տայ, սրա մօդ էլ պարզէրես դուս կաս:

ԳԷՈՐԴ

Ես յոյս ունիմ:

ԻՍԱՅԻ, վեր կինալով, երեալ խաչ է հանում:

Փուխ էհամ Աստծու զօրութենին: (Առանձին, նայելով գէպի երկինքը:) Եարար էս վունց վրայ ըերիբ:

ԿԱՐԱՊԵՏ

Խստի նստի հալա, Խսայի: (Խսային նստում է:) Հա, էն էի ասում, վուրթի, վուր մենակ վուղի վրայ չէ միլ հէսաբը: Հիմի ինձ ասա, փեսայ ջան. ախչկաս վուր դուս բերիմ, վուրթ մակումդ հաստատ կայ, վուր ուղիս նրան, թէ ինէնց ժամանակ իս ուղում անց կացնի հիդը:

ԳԷՈՐԴ

Ես ձեղ չեմ հասկանում, Գարասիմ եակուիչ... Եթէ ես ձեր աղջկան ուղելու միտք շունենայի, ես այս բովէիս այստեղ չէի գտնուիլ... Միայն, ի հարկէ, ինչպէս խստացել էք, ժամանակ կը տաք մեղ մի- մեանց հետ ծանօթանալու:

ԿԱՐԱՊԵՏ

Ջատ ապրիս, վուրթի: Ամա վիղիս ինչ է. 'Ես է- լախու էլ խստացայ քիղ՝ վուր չնուր բերիս, Մար- քրիստո միամիտ զուս զու քէր, բանի խարարութին չէր ունենայ. ամա էս խանի խարար խային տուն ննդաւ էնդի դէմուղէմը, թէ խիստ սրտով ուղում իս, կ'օսէ. ախչկաս իմացաւ ու սիրտը չէր էլի թրթում է:

Գէորդը շփոթվում է:

ԻՍԱՅԻ

Վա, հէր օխնած, 'Ես ինչ անիմ. վունցոր առայ, էնէնց էլ ծախեցի. էս տղէն վուր էտէնց ասաւ, 'Ես իմ խիլքէմէն խօմ բանիր չէի մօգօնի: Էտէնց չէ, Գիօրդի ջան:

ԳԵՈՐԳ

Բայց...

ԿԱՐԱՊԵՏ, ԽԱՅՐՈՒՆ:

Էտի է պալի ասածս, Է՛: (ԳԵՈՐԳԻՆ:) Հին պայմանի վրայ, վուրթի, էլի էնէնց դուս կու բերէի. ամա հիմի վուր դուս բերիմ ու բան է մէքաշ անմիդ անգէթ սիրտը կնտրեցիր ախչկաս:

ԳԵՈՐԳ

Ինչի՞ էք այդպէս հրամայում, Գարասիմ եակուլիշ. իմ միտքը ձեղ յայտնի է, մենք դորա մասին բաւականին խօսեցանք այս երեկոյ մեր տանը.

ԿԱՐԱՊԵՏ

Հա, վուրթի, լաւ փիքը արա էլի. հանաք մասլսարութին չէ ախչկաս բէզնամ անիլը: Քանի դուս չէ էկի, էլի վունցըր գ'ուղիս կու վիրշացնիմ քի մօդ. թմրդ փեսայ շըլիս, հաջաթ չէ, բարեկամ ըլինք. գ'ուղիս էլի վմրթի կու համարիմ քիդ, ինչ կայ:

ԻՍԱՅԻ, ԳԵՈՐԳԻՆ:

Աբա, էսէնց էլ մարթ կուլի:

ԿԱՐԱՊԵՏ

Ամա թէ դուս էկաւ ու իժում մէ խայտառակութին բերիր զլուխը, խստակ նրա բօղազն էլ դուս կու կտրիս, իմն էլ. մէ խօսկով աշխաքումը մէ մատը միզը կու դառնանք:

ԳԵՈՐԳ

Ինձ դարմացնում էք, ճշմարիտ. ես ձեղ տեղիք շեմ տուել այդպէս խօսելու:

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ անիս, վուրթի. ինչ էն մէ աղէն մէ բան

արաւ, աճկէնիրուս կոտրվեցաւ. ախչկայ հէրն ու մէրը հէնց գիղէին թէ էն սհաթին պիտի նշանը տայ, ամա էն մնհաւատը գգակը վիկալաւ ու փախաւ:

ԻՍԱՅԻ, զլուխը շարժելով:

'Ես էլ իմացիլ իմ:

ԳԵՈՐԳ

Եթէ խոստացել էր և չէ կատարել իր խօսքը, շատ անաղնիւ է վարուել:

ԿԱՐԱՊԵՏ

Արա, վուրթի, էտէնց բան էլաւ միր քախկումը. էնգումէն դէսը էլ չհէլ տղի տատալը գժարացաւ:

ԳԵՈՐԳԻ, ոտի կանգնելով:

Ե՞հ, Գարասիմ եակուլիշ, մարդ էլ կայ, մարդ էլ: Այդ կողմանէ դուք իմ մասին բոլորովին հանգիստ կացէք:

Ա.Զ դոնից բերում են Արդիսալ՝ արծաթեայ սկուտեց թէյը, եւ Արտէմը՝ նրան հետեւելով, արծաթեայ ամանի մէջ պաքսիմատներ:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ, ԱՐՏԵՄ

ԿԱՐԱՊԵՏ, ոտի կանգնելով:

Զօրանաս, վուրթի: (Ճաւախելով ԳԵՈՐԳԻՆ թէյ վերցնել:) Համեցէք, վեսայ ջան, անուշ արէք: (Խայրուն որ նմանապէս ոտի է կանգնել:) Վիկալ, Խայրի: (Ամնիքը վերցնում են թէյ:) Էս սահաթիս դալիս իմ, վեսայ ջան. դնամ ախչկաս իմաց անիմ: (Եր բաժակը դնում

է սեղանի վրայ եւ հրաւիրելով Գէորգին պարսիմատ վերցնել: Համեցէք, զէթաղլա: (Արտէմին՝ մինչդեռ Խասյին բւնով վերցնում է պարսիմատներ:) Դէսը թափաղարա, տօ:

Գուրս է դնում ձախ դռնից:

ՍԱՐԳԻԾ, առանձին:

Վուր զիկենայ, թէ ինչ խարար է:

Ճպապալով, զէմբը ծոռւմ է. յեսոյ, Արտէմի հետ ծառկ քչփչալով, գուրս է դնում աշ դռնից:

ՏԵՍԻԼԵ

ԳԵՈՐԳԻ, ԻՍԱՅԻ

ԳԵՈՐԳԻ

Զարմանալի մարդ ես, Խայի. Ես քեզ բարեկամարար մի քանի խօսք ասացի, իսկ զու դնում ես՝ մի առ մի բոլորն այնտեղ պատմում: Այդ ինչպէս կարելի է:

ԻՍԱՅԻ, բաժակը ճեռքին:

Վա, սուս խօ վունչիշ շիմ մօզօնի, Գիօրգի ջան. ինչի՞ չէի ասի, հազիր սրտէներուն ումիկ տվեցաւ էս զլսէն էւէտ զիփունանցը:

ԳԵՈՐԳԻ

Բայց մէկ մտածիր, թէ ինձ ինչ տեղը հասցըիր. ճշմարիտ, էլ չէի իմանում, թէ ինչ էի պատասխանի Քարասիմ Եակուլիշին:

Անբաւական նստում է փոքրիկ սեղանի մօտ:

ԻՍԱՅԻ

Հաջալի չէ, Գիօրգի ջան. յօրէս զիփ մէտի կողը ստովի լանը:

Նստում է նոյն սեղանի միւս կողմը, Գէորգի հանդէս, երեսը զէպի ձախ դուռը դարձրած:

ԳԵՈՐԳԻ

Ալս, Խայի, զու ինձ շատ նեղացըիր այսօր:

ԻՍԱՅԻ, թէյով զբաղուած եւ մնամ ձայնով:

Հոքուտ մեռնիմ, վեսայ ջան:

ԳԵՈՐԳԻ, անբաւականութեամբ:

Ե՞ն, վեսայ, վեսայ. քանի ասէք:

ԻՍԱՅԻ

Լաւ է, լաւ, Գիօրգի ջան, օգունդ զուն քու քէփը խարար մի անի, ախպէր, վունցոր կու հրամայիս, էնչնց կու ժաժ զամ. զ'ուզիս զըուստ վեսայ էլ վուր դառնաս, էնչախն էլ վեսայ շիմ ասի:

ԳԵՈՐԳԻ

Եւ շատ լաւ էլ կ'աննս:

ԻՍԱՅԻ, առանձին:

Ամբիլը մօդ էլան... (Գէորգին.) 2է, զուն ինձ ասա՞ վմւնց իս տեսնում Քարասիմ Եակուլիշին. լաւ մարթ չէ:

ԳԵՈՐԳԻ

Այն, լաւ է երեսում:

ԻՍԱՅԻ

Ասում իմ, է... զըուստ հէբութին կ'օնէ քիզ, քու արիւը:

ԳԵՈՐԳԻ

Ջատ կարելի է:

ԻՍԱՅԻ

Ի՞նչս ասում, Գիօրգի ջան. դրտ պէս բարի ու ճշմարիտ մարթ սաղ Թիվլիզումը չկայ... (Թէյը խըմելով:) Ուրիշ մարթ է ասում իմ, է... Մէ խօսկով քանի զնաս, Էնդաղա կու սիրիս Գարասիմ Եակովիշին... (Պաքսիմատ ծամելով:) Ժամասէր... աստուածապաշտ... ախկարին օղորմող... ու իր օղորմը մարթու բէղամաղ չի անի... ասկականի համա խօմա՝ զլուխը յիդ դրած ունէ...

Կարապետը Մարգրիտի ձեռքը բռնած դուրս է բերում ձախ դրնից:

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԳՐԻՏ

ԻՍԱՅԻ, շարունակելով:

Այ, յիդ մտիկ տու, քու դուշինկէն էլ դուս էկաւ:
Գէորգը իսկոյն ոտի է կանդնում:

ԿԱՐԱՊԵՏ, թունում է Մարգրիտին քաղմոցի մօտ և մօտենալով Գէորգին:

Արի, փեսայ ջան, Աստուձ միասին ծիրացնէ (Գէորգը շփոթվում է:) քիզ քու հաւնած Մարգրիտի հիդ:
Զեռքը բռնում է:

Գէորգի, աղատելով ձեռքը:

Խնդրեմ:

Գնում է դէպի Մարգրիտը:

ԻՍԱՅԻ, ոտրի կանդնելով և առանձին:

Մեռնիմ Քու օղորմութենին, Աստուձ:

Գէորգի, մօտենալով Մարգրիտին, փոքր ինչ շուարվում է,
բայց իսկոյն զավելով իրան՝ առնում է նրա ձեռքը:
Օրիորդ... շատ... ուրախ եմ... (Թեթեւ ողջունում
է և հնուանալով, առանձին:) Օ՛հ, Տէր իմ:

Վնում է աղշած:

ՄԱՐԳՐԻՏ, առանձին, ցածր ձայնով:
Աիս...

Շփոթուած՝ ընկնում է բազմոցի վրայ:

ԻՍԱՅԻ, մօտենալով Գէորգին և շշնջելով:

Վայ, ինչ իս անում, հէր օխնած:

Գէորգի, Խայուն, նմանապէս շշնջելով:

Սա Մարգրիտը չէ:

ԻՍԱՅԻ, նոյնպէս:

Վայնց թէ նա չէ, գժվիլ իս:

ԿԱՐԱՊԵՏ, անցնելով Խայուն ձախ կողմը և ցածր ձայնով:
Հը՛, ինչ է, սիւ կատու անց կացաւ:

ԻՍԱՅԻ

Տօ, սիւ կատու կի չէ, ասում է՝ Մարգրիտը չէ,
կ'օսէ:

ԿԱՐԱՊԵՏ, ժպտալով:

Ի՞նչ իս ասում, փեսայ ջան. վանց թէ Մարգրի-
տը չէ, թէզուղ սաղ աշխարին հարցու:

Մարգրիտը ներանում է:

Գէորգի, առանձին:

Տէր Աստուած, միթէ սա նա է... Բայց այս ան-
կարելի է:

ԿԱՐԱՊԵՏ, անցնելով Գէորգի աջ կողմը:

Է՛հ, լաւ է, փեսայ ջան, մի սպանի խիղճ ախչկաս,
արի, կշտին նսախ:

ԻՍԱՅԻ, միւս կողմից եւ ցածր:
Միսկ է, մի խայտաւակի խիղճ ախշկան:
ԳԵՌՐԳ, լուռ նսյում է կարապետին եւ Խայուն, յետոյ
առանձին:

Այս որտեղ ընկայ ես:
Գնում, նստում է Մարդրիսի մօտ:

ԿԱՐԱՊԵՏ
Աստուծ անփօշվնելի անէ:
ԻՍԱՅԻ

Ամին, Տէր Աստուծ:
ԳԵՌՐԳ, արհամարհական հայեացը է ձգում կարապետի
եւ Խայուռ վրայ, յետոյ Մարդրիսին:

Ներեցք, օրիորդ, իմ վրդովմունքը... (Թեթեւ ժըպ-
տալով...) ես բոլորովին չեմ սպասում այսպիսի զի-
պուածի... Զեր հայրը խոստացաւ ինձ ծանօթացնել
ձեղ հետ և յանկարծ այսպէս է վարվում... Ի՞նչպէս
է թվում ձեղ, օրիորդ, այս լանը... (Մարդրիսը ամօթ-
իսածութեամբ զլուխը բարշ է զցում. լոռութիւն:) Խօսեցք,
օրիորդ, խօսեցք, խնդրեմ... (Լոռութիւն:) Ինչի՞ շէք
խօսում, օրիորդ: (Մարդրիսը շփոթվում է. զարձեալ լո-
ռութիւն: Գէորգը զայրացած ուսերը բարձրացնում է եւ
տեղից վեր կիսալով, դիմում է կարապետին եւ Խայուն:)
Ասացք խնդրեմ, ի՞նչ է նշանակում բոլոր այս կօ-
մեղիան:

Գնում է դէպի Խային:

ՄԱՐԴՐԻԾ, առանձին, ցածր ձայնով:

Այս, Աստուծ:

ԳԵՌՐԳ, Խայուն:

Քեզ եմ հարցնում... (Զայնը ցածրացնելով:) Ո՞վ էր
այն աղջիկը, որ կրզում էր:
ԻՍԱՅԻ, նոյնպէս ցածր:

Ի՞նչ իս ասում, Գիօրգի ջան. ախար, հէնց դա
չէր ակօշկումը:

ԳԵՌՐԳ, բարկացած:

Ի հարկէ որ չէ... իբրև թէ ի՞նքդ չգիտես... Օ՞հ,
Խայի, սպասիր:

ԻՍԱՅԻ, երեսը խաչ է հանում եւ առանձին:

Միղմայ Քի, Տէր:

ԿԱՐԱՊԵՏ

Պարուն վեսայ, հանաք իս անում:

ԳԵՌՐԳ

Ի՞նչպէս թէ հանաք եմ անում... Դուք ինձ մւմ
տեղ էք ընդունում, պարոն... Մտարեցէք թէ ին-
չէր էիք խօսում մի քանի ժամ առաջ, իսկ այժմ
ի՞նչպէս էք վարվում... (Զայնը ցածրացնելով:) Ո՞ւր էք
ըերել այդ խեղճին, այստեղ նստացրել և խայտառակ
անում. դուք լաւ գիտէք որ դա իմ տեսածը չէ:

ԻՍԱՅԻ, լսելով Գէորգին, առանձին:

Ալմուրին զլուխս է ննդնում...

ԿԱՐԱՊԵՏ, մեղմաքար:

Լաւ է, քու հօրն օղորմի, է. սա վուր չէ քու
տեսածը, բայ ուրիշ ով կուլէր, զուն ինձ ասա...
ՄԱՐԴՐԻԾ, առանձին:

Էս ի՞նչ բան է:

ԻՍՍՅԻ, Գէորգին ցածր ձայնով:
 Մէ լաւ տիս, Գիօրգի ջան, թէ ախալէր իս. կու'լի
 աճկդ խափս է տալի:
 ԳէՈՐԳ, առանձին:
 Յնորուել են, ինչ է:
 ԿԱՐԱՊԵՏ
 Տեսնում իս լիզուն կապվեցաւ մէրաշ. դիփ մէտի
 խառնեցիր խղճին, ախար... Դուն ինձ էլ շշկլեցրիր,
 վուրթի, չէ թէ սրան... Սրա պէս սիրուն ու կար-
 տինկա գանա էլի կայ քախկումը՛, թէկուզ սան
 աշխրքումը՛...
 Մօտենում է Մարգրիտին:
 ԳէՈՐԳ, առանձին, դայրացած:
 Տես, տես...
 ԻՍՍՅԻ, առանձին:
 Ա'ս, սիրտս ինչ հանգն է զընզդընկում:
 ԿԱՐԱՊԵՏ, շարունակելով:
 Փահ, դրուստ հըիշտակ է, էլի... (Մարգրիտին տե-
 ղից վեր է կացնում:) Արա մէ թամաշա արա...
 ԳէՈՐԳ, առանձին:
 Օ՛հ, անիլան...
 ԿԱՐԱՊԵՏ, Մարգրիտին աշ ու ձախ պտոյտ տալով միեւ-
 նոյն էւտի վրայ:
 Ի՞նչն է պակաս՝ բօյին, բնւտաթը, մաղիրը, թէ
 էրեսի ուանդը... (Գէորգը սարսում է:) Սաղ աշխարքը
 կ'օսէ, վուր թաքաւուրի արժանի է, իս ու իմ հոքին:
 ԳէՈՐԳ, առանձին:
 ԽԵՂՃ աղջիկ:

ՄԱՐԳՐԻՏ, առանձին:
 Վայ իմ միխկլը:
 Նատում է իր տեղը եւ Թաշկինակով աչքերը սրբու-
 է: Խային՝ մտասանցութեան մէշ, ինքն իրան
 ձեռքերով խօսում է:
 ԿԱՐԱՊԵՏ, մօտենալով Գէորգին:
 Արի, վիեսայ ջան, նշանը տու ու քննթահ արա,
 թէ քու հօր գերեզմանը կու սիրիս:
 ԳէՈՐԳ.
 Բանական է, պարոն, բանական է. վերջացրէք,
 լնդրեմ:
 Գնում է եւ վերցնում է զլխարկը:
 ԿԱՐԱՊԵՏ, առանձին:
 Է՛տ է վուր զնացիր:
 Պատրաստվում է ճանապարհը կտրելու:
 ՄԱՐԳՐԻՏ, առանձին:
 Ինչի էստի էւտ չիս սպանում ինձ, Աստուձ:
 ԻՍՍՅԻ, առանձին:
 Ա'ս, Աստուձ, վմնաց իմանամ դրուստը...
 ԳէՈՐԳ, զլխարկը ձեռքին, մօտենում է Մարգրիտին:
 Օրիորդ, շատ ցաւում իմ որ ակամայ պատճառ
 գարձայ ձեր նեղութեանը... Մնաք բարեաւ... (Գառ-
 սալով խայուն:) Ճնորհակալ եմ, իսայի. լաւ բարե-
 կամութիւն արիր:
 Կամենում է զնալ: Աշ դռնից մտնում են Սարգիսը՝
 ձեռքին արծաթեայ սկրւտեղի վրայ շամպանիայով
 լի բաժակներ, եւ Արտէմը՝ դատարկ սկրւտեղով:

ՏԵՍԻԼԻ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ, ԱՐՏԷՄ

ԿԱՐԱՊԵՏ, առանձին:

Աստուծ գիղենայ, սաղ դուս չիմ թողնի: (Չախ ձեռքով բռնում է գէորգի օձիքից:) 'Ես քիզ համով առում իմ, ախալքը, արի, նշանը տու թէ խիլք ունիս, թէ չէ դուն ինձ չիս ճահշնում. ինձ Դարասիմ եակուլիշ Զամբախով կ'օսին:

ԳէՌՌԳ, աղատուելով կարապետից եւ բարկացած:

Թողէք, խնդրեմ... Դուք ձեզ մոռանում էք, պարոն... (Տեսնելով Արտէմին, որ փոքրիկ սեղանից հաւաքում էր թէյի բաժակները, ձեռքը խփում է իր ճակատին:) Ահ... (Արտէմին:) Այ տղայ, այն ինչ աղջիկ էք, որի ետևից երէկ զալիս էիբ:

ԿԱՐԱՊԵՏ, շփոթուած, խփում է իր ճակատին եւ առանձին:

Վայ, էս մէկը մտէս ննդաւ:

Արտէմին նշաններով հրամայում է լրու մնալ. յիտոյ գէորգի եւ խայու ետեւովն անցնում է Արտէմի ձախ կողմը:

ԳէՌՌԳ, շարունակելով:

Քեզ հետ եմ, ասա շուտ՝ մւր է այն աղջիկը:

ԱՐՏԷՄ

Էնթի օթախումն է:

ԻՍԱՅԻ

Ի՞նչ ախչիկ, տօ:

ԱՐՏԷՄ

Վայ, միլ ախչիկ պարունն, աղա: ԿԱՐԱՊԵՏ, աշ արմնկով խթում է Արտէմին եւ ցածր ձայնով: Կնըի, տօ անիծած:

ԻՍԱՅԻ, Արտէմին, մեղմաբար յետ մղելով կարապետին: Նատալիէն, տօ:

ԱՐՏԷՄ

Հրամիլ իս:

ԳէՌՌԳ

Այ, խարերայ անաստուածներ... Վերջապէս... ԻՍԱՅԻ, բարկացած:

Ախար, սիրաս իմանում էր, է:

Կամինում է գնալ:

ԿԱՐԱՊԵՏ, բռնելով խայու ձախ թերից եւ միամտաբար: Էս ի՞նչ խարար է:

ԻՍԱՅԻ, աղատուելով կարապետի ձեռքից:

Մէ մնւլափի, քու հօլն օղորմի, է:

Գուրս է նետվում ձախ դնից, Արտէմը զատարկ սկուտեղով յետերից գուրս է վագում. Կարապետը մնում է շուարուած:

ՏԵՍԻԼ

ԳէՌՌԳ, ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԳՐԻՑ, ՍԱՐԳԻՍ

ՄԱՐԳԻՍ, բեմի աշ կողմը, շամպանեայով սկուտեղը ձեռքին եւ առանձին:

Դէղի ծծիր, դուն բարեխօսիս:

ՄԱՐԴԻԲ, առանձին:

Սիրտ գնում է:

ԳԵՂՐԴ, կարապետին, փոքր լուսնինից յևոյ:

Այժմ ի՞նչ էք ասում, պարոն. այժմ ի՞նչ էք հնարելու...

ԿԱՐԱՊԵՏ, շուարուած:

'Ես վուր չիմ իմանում թէ ի՞նչ բան է...'

ԳԵՂՐԴ

Գուշէք պարոն, ոչ հոգի էք ունեցել, ոչ խիղճ...

Գոնէ ձեր աղջկան կը խնայէիք...

Ողջունելով Մարզրիտին, նետում է գէպի դիմացի գուռը, ուր հանգիպում է խայլուն:

ԿԱՐԱՊԵՏ, գէորգի յիտեւից մի բանի բայլ առաջ գնաւ. լով եւ թոթովելով:

Կաց, կաց:

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ԻՍՍՅԻ, ՆԱՏԱԼԻԱ, յիտոյ ԱՐՏԵՄ

ԻՍՍՅԻ, այլալուած, ձախ ձեռքով կանգնեցնում է գէորգին դռան շէմքումը:

Մնալափ, մնալափ հալա:

ԳԵՂՐԴ

Թնդ, ասում եմ...

ԻՍՍՅԻ, նոյնպէս:

Մէ մնալափ, է...

ԳԵՂՐԴ, յետ դառնալով եւ դայրացած:

Օհ, Աստուած...

ՆԱՏԱԼԻԱ, դռան յետեւից:

ԳԵՂՐԴաղլա, իսայի ջան:

Կարապետը շփոթուած անցնում է բեմի ձախ կողմը:

ԻՍՍՅԻ, նոյն դռանը:

Արի, ասում իմ, է... (Բանի ներս բերելով Կատալիային, դիմում է գէորգին:) Սրան իս ասում, ախալէլ:

Արտէմը դիմացի դռնից զլուկաը հանում է եւ մնում է այնպէս մինչեւ վերջը:

ԳԵՂՐԴ, առաջ գնալով:

Այ, իմ տեսածը:

ՆԱՏԱԼԻԱ, ճշում է:

Ե՛թ:

Ամօթից երեսը դարձնելով, ծածկում է իր գէմքը եւ մնում է այնպէս մինչեւ վերջը: Միեւնոյն ժամանակ Մարզրիտը ոտի կանգնելով, կամենում է առաջ գնալ, բայց ուշամափ իսկոյն վայր է ընկնում բազմոցի վրայ:

ԻՍՍՅԻ, շուարուած:

Քու տեսածը... Տօ, սա խօմ իմ կնիկն է:

ԳԵՂՐԴ, զարհուրած յետ բաշրւելով:

Քո կի՞նը...

Մնում է արձանացած:

ԿԱՐԱՊԵՏ, բեմի ձախ կողմը կանգնած եւ սարսափելի դրութեան մէջ, բռնցքով խփում է իր հակատին:

Էնդմար է ասած՝ վուր շուրին ջվալումը շի թալ կենայ:

Զերքը ճակատին՝ մնում է անշարժ:

ի ԱՅՅԻ, փոքր լուսթիւնից յետոյ, նայում է Կատալիային
եւ երկու ձեռքով իր զիմին խփելով:

Վայ քու իսայուն:

Մնում է նոյն դրութեան մէջ:

ՍԱՐԳԻՍ, բհմի աջ կողմը, շամազանեայով մկրտեղը ծեռ-
քին եւ առանձին:

Այ խաթաբալա:

Ո.մինքը քարացած մնում են իրանց դրութեան մէջ՝
ՊԱՏԻԵՔ: Մի քանի վայրկեանից յետոյ վարա-
գոյրն իշնում է:

Ա. Ե. Բ. Զ.

ՆԿԱՑՈՒԱԾՈՅԱԿՆԵՐ

Երես:	Տող:	Տպուած է:	Պէտք է:
5	5	հէստիկնիրը	հէստըկնիրը
24	11	վուրդի	վուրդի
28	7	մէջ:	մէջտեղ:
36	«	մունզրէկ	մունզրէկ
52	12	շատ	շատ
89	7	աղչկան	ախչկան
101	3	միջի	դիմացի
«	2	կէհայ	կ'էհայ
105	6	է, էլի,	է էլի
109	3	կողմը	դուռը
112	11	էլ բոլորովին	էլ որոշ կերպով բո- լորովին
115	4	Սարքիս տօ	Սարքիս, տօ
126	7	դուլին	դուլին
128	1	ՍԱՐԳԻՍ, մե- նակ:	ՏԵՍԻԼ ԺԱ. ՍԱՐԳԻՍ, մենակ:
150	9,10	վարագոյրն իշ- նում է:	վարագոյրը կամաց- կամաց իշնում է:

Azimuth	Altitude	Angle
90°	90°	0°
87° 45'	52° 12'	37° 33'
84° 45'	40° 15'	44° 45'
81° 45'	28° 00'	58° 45'
78° 45'	16° 48'	72° 45'
75° 45'	5° 00'	84° 45'
72° 45'	-6° 48'	88° 45'
69° 45'	-18° 00'	91° 45'
66° 45'	-30° 12'	93° 45'
63° 45'	-42° 15'	95° 45'
60° 45'	-53° 00'	97° 45'
57° 45'	-62° 48'	99° 45'
54° 45'	-71° 00'	101° 45'
51° 45'	-78° 12'	103° 45'
48° 45'	-84° 00'	105° 45'
45° 45'	-88° 48'	107° 45'
42° 45'	-91° 00'	109° 45'
39° 45'	-91° 48'	111° 45'
36° 45'	-90° 00'	113° 45'
33° 45'	-86° 48'	115° 45'
30° 45'	-81° 00'	117° 45'
27° 45'	-73° 48'	119° 45'
24° 45'	-65° 00'	121° 45'
21° 45'	-54° 48'	123° 45'
18° 45'	-42° 15'	125° 45'
15° 45'	-28° 00'	127° 45'
12° 45'	-13° 48'	129° 45'
9° 45'	-5° 00'	131° 45'
6° 45'	13° 48'	133° 45'
3° 45'	28° 00'	135° 45'
0°	42° 15'	137° 45'

1X6X6
1X6X7
1X6X8
1X6X9

2013

